ՆԵՂ Է ԴՈՒՌԸ

Շնորհակալություն, Նեվիլ եղբայր: Շնորհակալություն: Այնքան լավ է Տիրոջ Տուն վերադառնալ: Ես միշտ ուրախանում եմ, երբ վերադառնում եմ խորան, ուր էլ որ գնամ: Ինչ-որ բան կա այստեղ, որ ինձ դուր է գալիս վերադառնալ: Դա ուղղակի, ո՜հ, ես...Դա իմ առաջին և միակ եկեղեցին է եղել, որտեղ ես երբևէ հովվություն եմ արել: Եվ այնքան լավ է նորից վերադառնալ այստեղ: Եվ ես կարծում եմ, որ այն փառավոր առավոտ, երբ արեգակը կխավարի և աստղերի լույսը կմարի, հավատում եմ, որ այս խորանից ոմանք, այնտեղ ներկա են լինելու այն օրը, ովքեր լվացված են Գառնուկի Արյամբ: Ես սպասում եմ այդ ժամանակին:

2 Քիչ առաջ սրահով անցնելիս, հանդիպեցի Արգանբրայթ քրոջն այնտեղ՝ հետևում: Եվ նա ինձ ասաց, որ այստեղ ներկաների մեջ կան մարդիկ, ովքեր այն ժամանակ եղել են Քինգստոնի հավաքույթին, և ես...այնքան ուրախ եմ, որ նրանք այստեղ են որպես վկայություն: Որտեղ են նրանք, ովքեր եղել են Քինգսթոնում՝ Ջամայկայում տեղի ունեցած հավաքույթին, թող բարձրացնեն իրենց ձեռքերը: Այո, այնտեղ հետևում են: Լավ, հրաշալի է:

3 Տեսնում եմ Օրալի պաստառը: Ենթադրում եմ, որ արդեն հայտարարել եք նրա հավաքույթների մասին: Մինչև երեկ ես ամսաթվի մասին չգիտեի: Կարծեմ դրանք ամսի վեցից կսկսվեն, չէ՞: Ամսի վեցից մինչև տասնհինգը եղբայր Ռոբերտսը կլինի Լուիզվիլում: Անպայման գնացեք նրան լսելու: Ռոբերտս եղբայրը իմ մտերիմ ընկերն է, և Քրիստոսի ճշմարիտ ծառան: Եվ ես վստահ եմ, որ դուք ամեն երեկո կվայելեք նրա քարոզները: Եվ... նրա, հիվանդների համար աղոթելիս, ես, ես վստահ եմ, որ դուք կտեսնեք Աստծո շարժումը, որովհետև նա՝ Ռոբերտս եղբայրը, հավատքի հզոր զինվոր է, և մի մարդ է, ում Աստված զորավոր կերպով է օգտագործում: Իսկ նրա ծառայությունը սկսվել է...

4 Հիշում եմ, երբ առաջին անգամ հանդիպեցի նրան, նա քրքրված փոքրիկ մի վրանի մեջ էր այնտեղ՝ Սենթ Լուիսում, Միսսուրի նահանգում, իսկ ես...ոչ, Միսուրի նահանգի Կանզաս Սիթի: Իսկ ես Կանզաս Սիթիում

էի, Կանզասում, լսարանում: Նա նստած էր առաջին շարքերում: Ծառայությունն ավարտվելուց հետո մենք վերջում առանձնացանք և զրուցեցինք: Նրանք ինձ ծանոթացրին նրա հետ: Նա ինձանից երիտասարդ է, Օրալը մոտ քառասուն տարեկան է: Եվ նա ինձ ասաց. «Դուք կարծում եք Աստված կլսի՞ հիվանդների համար արված իմ աղոթքը»:

Ես ասացի. «Եղբայր, Նա ցանկացածի աղոթքը կլսի, ով կաղոթի»: Նա սկսեց հեռանալ և ասաց. «Դե, ես գնացի»:

5 Նա շատ խելացի մարդ է, քոլեջ ավարտած, չորս տարի հոգեբանություն, և ես վստահ եմ, որ նա, նա հրաշալի մարդ է: Նա հասել է այն մակարդակին, որտեղ իրեն խորհրդատուների անձնակազմ է շրջապատում և այլն, այնպես որ, խոսելիս, նա, նա ամեն բան մտածում է: Եվ ես վստահ եմ, որ նա ձեզ դուր կգա:

6 Այժմ կուզեի մի փոքրիկ զեկույց տալ այն բանի վերաբերյալ, թե մեր Տերն ինչ արեց Ջամայկայում և Պուերտո Ռիկոյում մեր փոքրիկ, համեստ հավաքույթների ժամանակ: Ես տարօրինակ մի բանի բախվեցի, բազմաթիվ հեռախոսազանգեր էին հնչում: Լեոն, որ այստեղ է, գիտի, որ հեռախոսը...Ամբողջ շաբաթվա ընթացքում բառի բուն իմասով հարյուրավոր տեղերից հրավիրում էին հավաքույթների: Բայց, այնուամենայնիվ, ինձ դուր է գալիս առաջնորդություն զգալ, թե ուր գնամ: Եթե ես գնամ, որովհետև ինձ մարդիկ են ուղարկել, ուրեմն ես գալու եմ այդ եկեղեցու կամ այդ կազմակերպության անունով: Եթե ես գնամ, որովհետև եղբայր Նեվիլն է ասել, որ պիտի գնամ, ստիպված կլինեմ գնալ եղբայր Նեվիլի անունով: Բայց ինձ դուր է գալիս, երբ Հիսուսն է ինձ ուղարկում, այսպես դու կարող ես գնալ Տեր Հիսուսի Անունով՝ մարդկանց հետ հանդիպելու համար:

7 Պառկած էի մահճակալին, մի փոքր հոգնած էի: Այս հովիտը վաղ թե ուշ, ես այս հովիտը ստիպված կլինեմ թողնել, որովհետև այն այնպես է վնասում կոկորդս, որ ուղղակի հազիվ եմ կարողանում դիմանալ: Ես կարող եմ գնալ ու գալ...Մի անգամ ես ու Լեոն գալիս էինք, Ֆլորիդայի ճահիճներում լինելուց հետո, մոտ քառասուն մղոնի հեռավորության վրա կոկորդս ամբողջովին մաքուր էր, իսկ Լուիզվիլից մոտ քառասուն մղոն այս կողմ այն նորից լցվեց: Բենքս Վուդ եղբայրը

պետք է որ այս առավոտ այստեղ՝ ինչ-որ տեղում լինի։ Իսկ մի անգամ էլ Քինգստոնից և, և Պուերտո Ռիկոյից էինք գալիս, որտեղ կոկորդս ուղղակի հիանալի վիճակում էր, ինքնաթիռից էլ դուրս եկա դեռ ամեն ինչ կարգին էր, բայց նախքան Ջեֆերսոնվիլ հասնելը, այն նորից լցվեց։ Տեսնում եք, այստեղ հովիտ է։ Ինչ-որ մանրէներն կան օդի մեջ կամ էլ Աստված է, Ով ստիպում է ինձ մեկնել։ Ես, ես դա չեմ հասկանում։ Ես շատ անգամներ եմ աղոթել և հարցրել դրա վերաբերյալ։

8 Ամեն դեպքում, ես քիչ առաջ եմ արթնացել, դա առավոտյան ժամը երեքի կողմերն էր։ Կինս և փոքրիկ տղաս քնած էին։ Ես բարձրացա մահճակալի ծայրին և մեծ թվով մարդկանց տեսա հավաքված հսկայական մի վայրում, և ես Բիլլի Փոլին ասացի. «Գնա՛ այնտեղ և այդ մարդկանց աղոթքի քարտեր բաժանի՛ր»։

9 Նա ասաց. «Լավ, հայրիկ»։ Մի քանի րոպեից նա հետ եկավ և ասաց. «Այդ մարդկանց աղոթքի քարտեր բաժանելը անհնար է»։ Նա ասաց. — Տեսնո՞ւմ ես այդ մարդուն, որ կանգնած է այնտեղ։

— Այո։

10 Նա ասաց. — Նա այնտեղ էր, և ես ասացի. «Բոլոր նրանք, ովքեր աղոթքի քարտեր են ուզում, թող բարձրացնեն իրենց ձեռքերը»։ — Ես գնացի, որ աղոթքի քարտ տամ նրան, բայց նա ինչ-որ տեղ էր գնացել։ Հետո գնացի այնտեղ, և նա արդեն ուրիշ տեղ էր գնացել։ Հիմա ահա նորից նա այստեղ է։ Ես անգամ մեկ աղոթքի քարտ չեմ կարող բաժանել։

11 Ես ասացի. «Լավ, Բիլլի, աղոթքի քարտեր բաժանելու կարիք չկա, որովհետև այստեղ տարածքն այնքան մեծ է, որ բոլորն էլ կարող են...»։ Աղոթքի քարտերը կարգուկանոնը պահպանելու համար է...հասկանում եք, և նրանց կագուկանոնի մեջ պահպանելու համար։ Ես ասացի. «Ո՛հ, ես բոլորին կարող եմ տանել այնտեղ, ոչ ավելին, քան տեղը կբավարարի շարքով կանգնեցնել և հերթով աղոթել նրանց համար»։

12 Նա ասաց. «Լավ»։ Եվ շրջվեց դեպի աջ և հեռացավ։ Եվ ես շրջվեցի *այն* կողմ, ուր որ նա գնաց և աչքերով հետևում էի նրան։

13 Եվ ես Երկնքից մի Ձայն լսեցի, որն ասաց. «Բայց այս պահից Ես կսկսեմ մեծացնել քեզ»։ Եվ ես աչքերս

բարձրացրի, ես երբեք մարդկանց այդպիսի բազմություն չէի տեսել, ամեն տեղից մարդիկ էին գալիս։

14 Եվ տրվեց Ռոբերտս եղբոր անունը, ասվեց. «Եղբայր Օրալ Ռոբերտսը հիմա գալիս է քեզ տեսնելու»։

Ես հարցրեցի. «Ինչպե՞ս ողջունեմ նրան»։

Ձայնն ասաց. «Նույն ձևով, ինչպես որ նա քեզ կողջունի»։

15 Ես տեսա, թե ինչպես էր Ռոբերտս եղբայրը գալիս սև կոստյումը հագին և փոքրիկ գլխարքով ինչպիսին Բինգ Քրոսբին է կրում, փոքրիկ սև գլխարկ էր մի քիչ թեք դրված։ Ես մի տեսակ վերևում էի կանգնաց և նա վեր նայեց և ասաց. «Ողջույն, եղբայր Բրանհամ»։

Եվ ես ասացի. «Ողջույն եղբայր Ռոբերտս», սեղմեցի նրա ձեռքը։

Ասաց. «Դուք մեծ բազմություն ունեք»։

16 Ես ասացի. «Բավականաչափ մեծ բազմություն է, եղբայր Ռոբերտս»։ Եվ նա շրջվեց ու գնաց Բիլլիի գնացած ուղղությամբ՝ դեպի աջ։

17 Ես մտածեցի. «Որտեղի՞ց եմ դիմելու նրանց»։ Եվ փորձում էի տեղ գտնել՝ խոսելու համար։ Ես այնպիսի վիճակում էի, մի տեսակ ցածրում էի, որ չէի տեսնում, թե որտեղից դիմեմ նրանց։

Եվ ինչ–որ մեկն ասաց. «Եկե՛ք այստեղ»։

18 Ես ասացի. «Բայց այնտեղից էլ քեզ լավ չի երևում»։ Եվ ես սկսեցի անցնել այդ տեղով։ Եվ այդ ժամանակ հիշեցի սա, ասացի. «Ինձ համար կարևորն այն է, որ միշտ իմ սրտում Աստծո և Իր զավակների առջև խոնարհություն պահեմ»։

19 Եվ ես տեսիլքից դուրս եկա։ Ես մտածում էի. «Ի՞նչ է դա նշանակում։ Գուցե դա նշանակում է, որ մենք ունենալու ենք այսպիսի...Կամ որտե՞ղ, որտեղ է այն լինելու»։ Հասկանում եք, երբեմն տեսիլքների մեջ Նա չի ասում, թե որտեղ, Նա, Նա պարզապես խոսում է և դու պարզապես...Դա առակի նման է։ Եվ ես վստահ եմ, որ նրանք, ովքեր կարդում են Աստվածաշունչը, հասկանում են դա։

20 Այնուհետև գնացի դիմացի սենյակը և մի քիչ նստեցի այնտեղ, դա առավոտյան ժամը երեք անց կեսի կամ չորսի կողմերն էր։ Ես ուզում էի քնել։ Հետ դարձա և նորից պառկեցի, և մի երազ տեսա, դա ամենատարօրինակ

երազն էր։ Ձեզանից շատերը ճանաչում են մենեջերներից մեկին՝ Ձեք Մուրին, Ձեք Մուր եղբորը։ Երկար տարիներ է, ինչ ես ճանաչում եմ նրան։ Երազումս տեսա, որ ես նրա աղջկա հետ հանդիպման եմ, աղջիկ, որը մոտ տասնյոթ տարեկան էր, և նրա ձեռքը բռնած բարձրանում էինք լեռը, փոքրիկ Ձեքիի։ Ես նրան դեռ բարուրից եմ ճանաչում։ Եվ ես տանում էի նրան լեռը, և ես ուղղորդելով այս աղջկան, բարձրացա երեք քաղաքային թաղամասի չափ վերև՝ դեպի գագաթը։ Մենք մոտեցանք մի մեծ ծառի տակ, և նա նստեց։ Եվ ինչպես շատ պատանի աղջիկներ, որոնք այժմ հագնում են ուռուցիք փեշերով շրջազգեստներ, գիտեք, նա ևս հագել էր այդ տեսակի շրջազգեստ։ Եվ նա փռեց այն և նստեց։ Եվ սովորաբար ինչպես սիրահարներն են իրար նայում, նա ձեռքերը *այսպես* դրեց և սկսեց նայել դեպի երկինք։ Այո, Ձակին շատ լավ աղջիկ է, նա մեծ բերան և խոշոր աչքեր ունի, և մի տեսակ շիկակարմիր մազեր, չափազանց գրավիչ չէ, բայց իսկական փոքրիկ լեդի է։ Ես տեսնում էի նրա խոշոր աչքերը, մինչ նա նայում էր դեպի երկինք և, թե ինչպես էր երկինքը արտացոլվում նրա աչքերի մեջ։

21 Ես մոտ հինգ ոտնաչափի հեռացա նրանից և մի կողմի վրա *այսպես* պառկելով՝ մի ծղոտ վերցրեցի, դրեցի բարանս ու սկսեցի ծամել։ Եվ ես սկսեցի մտածել. «Ի՞նչ եմ ես անում այստեղ։ Ինչո՞ւ ես՝ տարիքով տղամարդ, և այս երիտասարդ աղջկա հետ։ Ինչո՞ւ»։ Ես ասացի. «Ես ամուսնացած եմ և երեխաներ ունեմ։ Ես ոչ մի գործ չունեմ այս աղջկա հետ այստեղ»։

22 Եվ ես սկսեցի վեր կենալ։ Եվ երբ սկսեցի վեր կենալ, մի Ձայն եկավ ծառից և ասաց. «Սա որոշակի նշանի և պատճառի համար է»։

23 Ու ես արթնացա, քիչ էր մնում ճչայի, մի, մի մղձավանջ էր։ Ես մտածում էի. «Ո՜հ, հետաքրքիր է, արդյո՞ք դա նշանակում է, որ ես կհեռանամ հավատքից, թե ինչ-որ բան է կատարվելո՞ւ ինձ հետ»։ Ես մտածում էի. «Եթե փորձեմ իմ սեփական միտքն օգտագործել, ապա ամեն ինչ կխառնեմ, ուստի ես պարզապես կսպասեմ Աստծուն»։ Ես ես սկսեցի աղոթել։ Ասացի. «Տե՛ր, արդյո՞ք այս երազը վերաբերում է այդ գիշերվա վաղ ժամին տեղի ունեցած տեսիլքին, թե չէ, ի՞նչ է սա նշանակում»։

24 Որոշ ժամանակ սպասելուց հետո, գուցե մի ժամ, (կինս արդեն արթնացել և նախաճաշը պատրաստել էր),

այդ Զայնը նորից հնչեց և ասաց. «Գնա՛ Քինգստոն, և այնտեղ քեզ կասվի, թե ինչ անես»:

25 Այսպիսով, ես անմիջապես գնացի Քինգստոն: Եվ նրանք, նրանք հինգշաբթի օրը իմացան, որ ուրբաթ օրը ես այնտեղ կլինեմ: Դա էր մեր ունեցած ամբողջ գովազդը: Ես վատ եմ...?...կամ մարդկանց քանակը հաշնելուց, որովհետև սովորաբար ես չափազանցնում եմ դա: Բայց առաջին երեկոյան, ես կասեի, մոտավորապես տասներկու, ո՛հ, մոտավորապես տասներկու հարյուր մարդ կար, որովհետև մեկ օր առաջ էին իմացել դրա մասին: Իսկ հաջորդ օրը լրաբերները չորս մղոն վազում էին սարերը, փոխանցելով տեղեկությունը: Մի լրաբերը վազում էր մոտ չորս ժամ, իսկ հետո մյուսը բարձրանում էր սարերը: Երկրորդ երեկոյան այնտեղ մոտ հինգ հազար մարդ էր եկել: Երորրդ երեկոյան հաշվել էին մոտ տասնհինգ, գուցե քսան հազար մարդ: Եվ այնտեղ հազարավոր մարդիկ Տիրոջն եկան:

26 Այդ տեսիլքի մեջ փոքրիկ եկեղեցի կար, աղջիկը կույս էր, ընդամենը երեխա էր, և դա նշանակում էր եկեղեցու կուսությունը: Իսկ երեք քաղաքային թաղամասները վերև դեպի բլուր իմ ծառայության երեք օրերն էին: Եվ իմ ծառայության միջոցով վերցրեցի փոքրիկ կույս եկեղեցուն այնտեղից, ուր որ էր, ավելի վեր Աստվածային բաներում, մինչև որ դա ցնցեց ամբողջ կղզին:

27 Եվ, ո՛հ, ծառայողներն ու շուրջը գտնվող մարդիկ լացում, խնդրում և համոզում էին. «Եվս մեկ կամ երկու գիշեր էլ», քաղաքի պաշտոնյաները նույնպես:

28 Այնտեղից մենք ուղղևորվեցինք դեպի Պուերտո Ռիկո: Այնտեղ մեզ դիմավորեցին մեծ ցնծությամբ, և հազարներով գալիս էին, ինչպես հաշվեցին՝ մոտ քառասուն հազար թանկագին հոգիներ եկան Տեր Հիսուսին: Մեկնելիս հուսով եմ ես...Ես սա կասեի իմ եկեղեցում, բայց ես դա չէի ասի հանրության մեջ, այնտեղ, որտեղ չկան քո մարդիկ, որովհետև դա կարող է ճիշտ չլինել: Բայց ես այստեղ՝ թղթի վրա գրված ունեմ այն մարդու անունը, ով ակնարկեց, երբ մենք մեկնում էինք, նրա հետ էլի մարդիկ կային:

29 Եվ ես...Նա, նա ասաց. «Մենք պատիվ ենք ունեցել տարբեր ծառայողների ընդունել այս կղզում»: — Վերջերս, երբ պարոն Բիլլի Գրեհեմը կղզում էր,— ասաց,— մենք փառավոր ժողով ունեցանք, — ասաց,— բայց Բիլլի

Գրեհեմը պարզապես բերեց մեզ նույն Ավետարանը, որը մենք միշտ լսել ենք: Նա ասաց. «Այնուհետև մեզ համար պատիվ էր ընդունել կղզու վրա պարոն Ռոբերտսին,— ասաց նա,— և պարոն Ռոբերտսն երեք օր հզոր ժողովներ պարգևեց մեզ: Բայց,— ասաց նա,— հյուրանոցում ծախսերը այնքան մեծ էին, — ասաց,— երեք գիշերվա համար երեսուն հինգ հազար դոլար հյուրանոցի ծախսի համար»: Ասաց. «Հետո պարոն Օսբորնն էր այստեղ, ով Քրիստոսի մեծ ծառան է, բայց,— ասաց,— երբ պարոն Օսբորնը մեկնեց, անկում եղավ,— ասաց,— կարծես ամեն բան անհետացավ:

30 — Բայց,— ասաց,— այս հավաքույթում մենք նկատեցինք, որ բեմի վրա գրեթե ոչ ոք չկար, ում համար եղբայր Բրանհամն աղոթել էր: Բայց,— ասաց,— երբ ծառայությունն ավարտվեց, մենք լսարանում հավաքեցինք մի բեռնատար շարժասայլակներ, հենակներ և նման բաներ: Նա ասաց. «Այս անգամ մարդը չէր, այլ Աստված էր մեզ այցելել»:

31 Ես ասացի. «Մի՛ սպասեք իմ աղոթքներին, այլ դուք աղոթեք այնտեղ, դրեք ձեր ձեռքերը միմյանց վրա»: Իսկ նրանք հարթակի վրա բերել էին գուցե դյուժին կամ երկու, և, երբ զանազանության պարգևը իջնում էր, մարդիկ պարզապես գոռում էին: Մենք կանգ էինք առել չորս աստղանի հյուրանոցում, և բոլոր ծախսերը ինքներս հոգացինք:

32 Դուք եք դրան նպաստել ինձ ուղարկած ձեր տասանորդներով: Ահա, թե ինչն է նպաստել: Եվ ես ուզում եմ, որ իմանաք, որ դուք բաժին ունեք այս ամենից: Եվ գալիք մեծ փառահեղ օրում Աստված վարձահատույց կլինի ձեզ դրա համար: Տեսնո՞ւմ եք, ձեզ պետք չէ...

33 Եթե մարդը ինքն է գնում և ինչ-որ բան անում, հետո, տեսնո՞ւմ եք, երբ մարդը հեռանում է, նրանք մտածում են. «Ինչպիսի հիասթափություն: Աստված լքեց մեզ»: Աստված ձեզ չի լքում: Նա միշտ ձեզ հետ է: Հասկանում եք, դուք նույն չափով դրա մեջ եք, ինչպես ցանկացած մեկը: Աստված կարող է մարդուն օգտագործել որոշակի ծառայության համար, բայց դա չի նշանակում, որ Աստծո ընտրությունը ընկնում է այդ մարդու վրա: Դա ձեր սեփական հավատքն է առ Աստված:

34 Իսկ նրանք իրենց բերում են այդպիսի շարժասայլակներով, որոնք վերցնում են մակնական սայլակի նման անիվները և, և տախտակ են ամրացնում,

դնում են մարդկանց դրա վրա և բերում են ներս: Եվ ծառայության ավարտվից հետո բոլոր ճանապարները դատարկվել էին, նրանք բեռնատարներով այնցել և հավաքել էին հին սայլերը, շարժասայլակները, հենակները, պատգարակներն ու մահճակալները, նրանք պարզապես թողել էին դրանք և գնացել, որովհետև Տիրոջ ներկայությունն այնտեղ էր: Ահա թե ինչ ենք մենք ուզում տեսնել: Այդ ժամանակ մարդը տեսադաշտից դուրս է, Աստված է գործում:

35 Վերադառնալով. պարզապես որպեսզի օգնեմ այս առավոտ, ես մի քանի րոպեից կխոսեմ: Ես տղաներին խնդեցի, որ ձայներիզը չթողարկեն: Երեք օր ես լարված մտածում էի. «Ինչի՞ մասին եմ խոսելու»: Եվ այսօր դուրս գալուց առաջ ես իմ սրտում զգացի իրոք խիստ նախազգուշացում եկեղեցու վերաբերյալ: Եվ ես նրանց ասացի. «Ձայներիզը ձայնագրեք, բայց վաճառքի մի՛ թողարկեք»:

36 Մինչ այդ, կուզենայի մի փոքրիկ վկայություն տալ, որը ձեզ օգտակար կլինի: Ինձ համար էլ դա օգտակար էր: Մենք՝ Լեոն, Ջինին, ես, տղաս՝ Բիլլի Փոլը, և նրա կինը երեք օրով գնացել էինք ձկնորսական ճանապարհորդության, մի ընկերոջ մոտ, ով Ջորջիայից է գալիս է այստեղ՝ խորան: Նրանք մեզ տարան ինչ-որ ճահիճների մեջ, ես հիմա չգիտեմ, թե որտեղ էր այն գտնվում, Օկիչոբիի մոտակայքում էր կամ այդ մասերում, ես չգիտեմ այն անունը, որը սեմինոլ հնդկացիներն են տվել դրան: Ամեն դեպքում, մենք բազմաթիվ մղոներ էինք գնացել:

37 Եվ այս Էվանս եղբայրը, նրա եղբայրը մեղավոր է: Նա մեծ ձկնորս է, և մի քանի ամիս առաջ եղել էր այդ ճահիճներում: Իսկ այդ մասերում կան, ինչպես նրանք են անվանում, «բոժոժավոր օձեր»: Եվ այդ բոժոժավոր օձը կծել էր նրան, և վերջինս հազիվ էր փրկվել մահից: Նրա վերջույթը այտուցվել էր, նրան տարել էին բժշկների մոտ և վերջիններս նրան ներարկումներ էին արել: Դրանք մահացու են: Այնտեղ նաև կան բազմաթիվ կոտոնմաուսներ՝ կոտոնմաուսներ, մոկասիններ և մոտ վեց մետր երկարությամբ ալիգատորներ:

38 Եվ մինչ մենք այնտեղ ձուկ էինք որսում, ես հսկայական մի մեծ պերկես բռնեցի: Ո՛հ, դա հանգստի իսկական օր էր: Նա այնքան մեծ էր, որ ես չկարողացա նրան հանել ջրից, նա պարզապես կարթն ուղղեց

և հեռացավ, ազատեց ինքն իրեն։ Մենք բազմաթիվ պերկեսներ բռնեցինք, մոտ հարյուր հիսուն ֆունտ մեծ պերկեսներ։ Եվ, նրանք...նրանցից մի քանիսը կշռում էին մի քանի ֆունտ, չորսից յոթ, ութ ֆունտ։ Եվ ես բռնել էի այդ մեծը, բայց նա պոկվեց։

39 Կարթը նորից գցեցի և ես, ես մեկ ուրիշը բռնեցի՝ մոտ վեց, յոթ ֆունտանոց։ Իմ ձողը երկար էր, որը ստիպված ես լինում պահելու այդ ջրաշուշանների տերևների վրա։ Եվ եղբայր Էվանսը...Մենք բոլորս թռչվել էինք ջրի ծանծաղուտում քայլելուց, որովհետև դա պարզապես ճահիճ է։ Նա կոշիկները հանել էր, տաբատը մինչև ծնկները ծալել, չոր տեղում նստել, կարծես չորացնելու իր հագուստը։ Եվ նա տեսավ այս մեծ ծկանը թավալվելիս թփերի մեջ, իսկ ես քայլում էի նրա ուղղությամբ։ Նա ասաց. «Մի րոպե, եղբայր Բրանհամ։ Ես կբռնեմ դրան քեզ համար»։ Եվ վազեց այնտեղ։ Ես դուրս հանեցի այն, ենթադրում եմ, որ ձուկը համարյա սատկած էր, թավալ էր տալիս այդ տերևների մեջ։ Եվ նա վազեց, որ հանի այն։ Եվ երբ նա վազեց, ճչաց և հետ եկավ։ Օձը կծեծ նրան։

40 Մենք նայեցինք օձի խայթած տեղը, նրա ոտքի վրա ատամներից առաջացած խոր վերքեր կային, և այն այնքան ուժեղ էր ցավում, որ աչքերին անգամ արցունքներ կային։ Ասաց, որ զգում էր, կարծես թե իր ոսկորները կաթվածահար են լինում։ Եվ ահա մենք այնտեղ էինք ճահիճի մեջ բազուն մղոներ հեռու։ Նա հախթանդամ էր՝ իրեն շալակելու համար։ Իսկ երբ օձը խայթում է մարդուն, այնպես ես թուլանում, որ մի քանի րոպեների ընթացքում մեռածի նման ես դառնում։ Լեոն այնտեղ էր։ Եվ միտքս եկավ. «Դու միշտ Աստված ես»։ Եվ երբ նա իր ոտքը բռնել և սեղմել էր, որտեղ օձի խայթած տեղում մնացել էին այդ երկու մեծ ատամներից առաջացած խոր վերքերը, ես ձեռքս դրեցի այդ հատվածի վրա և ասացի. «Տե՛ր, Քո Խոսքում գրված է. «Նրանք օձեր և կարիճներ են կոխկրտելու, և ոչ մի բան չպիտի նրանց վնասի»»։ Եվ հենց նույն պահին, ամեն ցավ հեռացավ նրան ոտքից։ Կոշիկները հագավ և ամբողջ օրը ձուկ էր որսում։

41 Այդ երեկո նա գնաց և պատմեց նրանց այդ մասին, նրանք ասացին. «Դու ավելի լավ է բժշկի գնաս»։

42 Նա ասաց. «Եթե Աստված մինչ այս պահը պաշտպանել է ինձ, ուրեմն Նա հետո էլ հոգ կտանի իմ համար» Մենք

երեք օր ձուկ էինք որսում, հիվանդության ոչ մի հետևանք չկար։

43 Աստված միշտ Աստված է։ Նա պահում է յուրաքանչյուր խոստումը։ Իմ ծառայության ողջ ընթացքում դա առաջին դեպքն է, որ ես երբևէ տեսել եմ, թե Աստծած ինչպես հպվեց օձի խայթածին, որովհետև առաջին անգամ էր, որ ես առիթ ունեցա աղոթել օձի կողմից խայթած ինչ–որ մեկի համար։ Պարզապես ձեզ տեղեկացնելու համար, որ Նա պահում է Իր բոլոր խոստումները, և Նրա Խոսքերը բարի և ճշմարիտ են։ Ամեն։

44 Չմոռանաք երեկոյան և այս եկող չորեքշաբթի օրվա ծառայությունների մասին։ Եվ հիմա աղոթեք մեկի համար, ով իսկապես դրա կարիքը ունի, դա ես եմ։ Եվ չմոռանա՛ք, անպայման գնացե՛ք եղբայր Ռոբերտսի հավաքույթին, երբ գա քաղաք, և ողջունեք նրան խորանի կողմից։

45 Նախքան Սուրբ Գրքից կարդալը, ես, ես կուզենայի, որ մենք մի պահ կանգնենք։ Եվ առանց երաշժտության եկե՛ք երգենք եկեղեցու այս փառավոր հին օրհներգից մեկ կամ երկու տուն՝ *«Հավատքս Քեզ է նայում»*։ Լավ, հիմա բոլորդ մացեք ինձ և եկե՛ք միասին երգենք այս երգը։ Մի՛ մտածեք այն մասին, թե ինչպես եք երգում, պարզապես երգեք Աստծո փառքի համար։ Չէի՞ք առաջնորդի մեզ, եղբայր Նեվիլ։

Հավատքս Քեզ է նայում,
Ով Գառ Գողգոթայի,
Փրկիչ Աստվածային,
Լսիր աղոթքս հիմա,
Մեղքերս ջնջիր,
Թող այսուհետ
Քեզ նվիրվեմ։

Երբ կյանքի մութ բավիղը մտնեմ,
Ու ցավերս շատանան,
Դու եղիր Առաջնորդս,
Խավարս լույս դարձրու,
Վախերս հեռացրու,
Մի թույլ տուր
Քեզանից հեռանամ։

46 Գլուխներս խոնարհված կուզենայի կարդալ Աստվածաշնչի սուրբ Գրություններից՝ Մատթեոսի

Ավետարանի 7–րդ գլխի 13 և 14–րդ համարները: Եվ թող Տերն առատորեն օրհնի Իր Խոսքի ընթերցումը:

> *Նեղ դռնով ներս մտեք, որովհետև լայն է այն դուռը և ընդարձակ այն ճամփան, որ դեպի կորուստ է տանում, և շատ են նրանք, որ մտնում են դրանով,*
>
> *որովհետև նեղ է այն դուռը և նեղվածք է այն ճամփան, որ դեպի կյանք է տանում, և քչերն են, որ գտնում են այն:*

47 Աղոթենք: Ո՛վ Աստված, որ Տեր Հիսուսին հարություն տվեց մեռելներից և հանեց գերեզմանից, և այս առավոտ ներկայացրեց Նրան մեզ որպես կենդանի Ջոհ, մենք մեր կյանքերը դարձյալ խոնարհությամբ ընծայում ենք Քեզ, մտածելով այն մասին, որ Դու հոգ կտանես մեզ համար: Այն ժամանակ, երբ դեռ մենք մեղավոր էինք, մեռած մեղքի և հանցանքների մեջ, Դու ուղարկեցիր Քո միածին Որդուն, մեղավոր մարմնի տեսքով, որպեսզի քավություն դառնա մեր մեղքերի համար, որ Անմեղը, չարչարվելով մեղավորների փոխարեն, կարողանա մեզ նորից հաշտեցնել Քեզ հետ հաղորդակից լինելու համար:

48 Եվ, ո՛վ Աստված, եթե այս առավոտ մեր մեջ մեղք կա, մի բան, որ կարող է արգելք հանդիսանալ, որ Սուրբ Հոգին բերի մեզ Աստծո Պատգամը՝ մեզանից յուրաքանչյուրի սրտին ուղղված, խոնարհությամբ խնդրում ենք, Տե՛ր, որ ներես մեր հանցանքները: Մաքրի՛ր մեզ Տեր Հիսուսի Արյունով: Ում...Հոգու խորքում մենք գիտնեք, որ ոչինչ ենք, և մենք խոստովանում ենք, որ ոչինչ ենք: Բայց Դու սուրբ ես, Դու ճշմարիտ ես, Դու արդար ես, Դու ես ողորմության Աղբյուրը: Եվ այսօր մենք՝ որպես զղջացող հոգիներ խոնարհությամբ խոնարհվում ենք այստեղ: Ինչպես վկայություն արվեց Ջամայկայից, Պուերտո Ռիկոյից և այնտեղ, որտեղ Դու այսպիսի զորավոր գործեր ես արել, ո՛վ Աստված, սա Արդարի գալստյան նշանն է:

49 Ինչպես Դու ազատեցիր Էվանս եղբորը այդ օձի թունավոր ժանիքներից, որովհետև նա հավատացյալ էր, և Քո Խոսքերը միշտ ճշմարիտ են: Հիմա, Տե՛ր, ազատիր մեզ մահվան ժանիքներից, որտեղ թշնամին խայթել և թունավորել է մեզ: Թող Քո բուժիչ քսուքը այս առավոտ, Տեր, հագեցնի մեր հոգիները և մաքրի մեզ մեր բոլոր անարդարություններից: Բժշկի՛ր ֆիզիկական մարմինների հիվանդությունները, որոնք պատճառվել են

թշնամու ուժի կողմից։ Թող բոլորը, ովքեր աստվածային ներկայության մեջ են, բժշկվեն։

50 Խոսի՛ր հիմա մեզ հետ Քո գրված Խոսքի միջոցով, Տե՛ր։ Ես չգիտեմ, թե ինչ ասեմ, բայց Դու կհոգաս դրա համար։ Եվ Դու մեզ զգուշացրու, Տեր, և պատրաստիր Քո Գալստյանը։ Որովհետև մենք դա խնդրում ենք Հիսուսի Անունով և Նրա համար։ Ամեն։

51 Ես միշտ մի քիչ ուշանում եմ, որովհետև հիմա սպասում էի։ Կարծեմ Կիրակնօրյա դպրոցն արդեն վերջացել է։ Բայց մի բան կա, երբ տուն եմ գալիս, ինձ թվում է, թե ես բավականաչափ ժամանակ ունեմ։ Դուք գիտեք, որ մենք շատ ենք շտապում, ամեն դեպքում։ Եվ այսպես, մենք պարզապես կհավատանք Աստծուն։

52 Մեր Տերը խիստ զգուշացնում էր իր սերնդի մարդկանց՝ այն մարդկանց, ովքեր շատ կրոնասեր էին։ Եվ Նա ասում էր. «Նեղ է այն դուռը և նեղվածք է այն ճամփան, որ դեպի կյանք է տանում, և քչերն են, որ գտնում են այն»։ Դրա համար չէր, որ նրանք կրոնասեր չէին։ Նրանք շատ կրոնասեր էին։ Եվ քանի որ նրանք հավատում էին եկեղեցուն և որոշակի հավատամքներին, հարանվանություններին, և (որոշ չափով) հավատում էին Աստծուն, կարծում էին, թե ամեն բան կարգին էր։ Բայց Նա ասում էր նրանց, որ քչերն են, որ կմտնեն։

53 Եվ զարմանալի կլիներ, եթե այսօր ես չկարողանայի այդ սերունդը նմանեցել այս սերունդին։ Տեսնո՞ւմ եք, դա հրեական ժամանակահատվածի ավարտի ժամանակ էր, և Նա վկայակոչում էր տարբեր մարդկանց և տարբեր ժամանակահատվածների ավարտներ, և ասում էր, որ այն նույն բաները, որոնք արվեցին նախորդ ժամանակահատվածներում, արվում են նրանց առջև։ Բայց նրանք չկարողացան դա ճանաչել։ Եկե՛ք դիտարկենք այդ իրադարձություններից մի քանիսը, որոնց մասին Նա խոսում էր։

54 Օիրնակ՝ նրանք չէին կարողանում հավատալ, որ Աստված էր այդ Մարդու մեջ։ Դա ամենամեծ խոչընդոտն էր, որի վրայով նրանք պիտի անցնեին, այն, թե ինչպես Նա մարդ լինելով՝ Ինքն Իրեն Աստված էր դարձնում։ Նրանք չէին կարողանում տեսնել, թե Աստված ինչպես կարող էր բնակվել մարդկային մարմնի մեջ։ Եվ բոլոր ժամանակաշրջաններում, բոլոր ժամանակներում Աստված միշտ բնակվել է մարդու մեջ։ Մարդն Աստծո ներկայացուցիչն է։ Բոլոր սերունդներում Աստված խոսել

է Իր ժողովրդի հետ մարդկային շրթունքներով: Նա միշտ ընտրում է ինչ-որ մեկին կամ ինչ-որ բան, որը Նա կկարողանա օգտագործել:

55 Եվ Նա վկայակոչեց Աբրահամին, դա այնպիտի գայթակղություն էր նրանց համար: Նա ասաց նրանց. «Եթե դուք ձեզ կոչում եք «Աբրահամի զավակներ», Աբրահամը՝ ձեր «հայրը», տեսավ Իմ օրը և ուրախացավ: Աբրահամը՝ մարգարեն»: Եվ կասկած չկա, որ Հիսուսը հիշեցնում էր նրանց, որ ապացուցեց նրանց, որ Նա Մեսիան էր, որովհետև Մեսիայի նշանը հետևում էր Նրան: Այդպես է եղել բոլոր ժամանակաշրջաններում, Մեսիայի նշանը: Բայց այն, որ Նա Ինքն Իրեն Աստված էր դարձնում, Ինքը Մեսիան, դա գայթակղեցրեց նրանց: Նրանք չէին կարողնում դա հասկանալ:

56 Եվ այսպես, երբ Աբրահամը (ում նրանք իրենց հայրն էին անվանում) հանդիպեց Աստծուն, Նա նույնպես մարմնի մեջ էր, որովհետև Նա հորթի միս կերավ, հաց ու կարագ կերավ (և կաթ խմեց) Աբրահամի ներկայությամբ, մինչդեռ Նա Աստված էր: Աբրահամը ճանաչեց Նրան՝ Աստծուն, և Նրան «Էլոհիմ» անվանեց, որը նշանակում է Ամենակարող Եհովա: Մարդու հագուստ հագած, փոշոտված մարմնով, նստեց ծառի ստվերի տակ, միս կերավ և կաթ խմեց: Այն ժամանակ այդ սառը, խստասիրտ, եսասեր, արդար հրեաները չկարողացան հավատալ, որ Նա Աստծո Որդի էր, և Աբրահամին կոչեցին իրենց հայրը: Նա իրենց հայտնում էր, որ կատարում է նույն բաներն Իր մարմնի մեջ, ինչ որ Աստված արեց ուրիշ մարմնում, երբ հանդիպեց իրենց հոր՝ Աբրահամի հետ: Եվ Աբրահամը հավատաց դրան, իսկ նրանք չկարողացան դրան հավատալ:

57 Տեսնո՞ւմ եք, երբ Աբրահամը նստած էր իր վրանի տակ, որովհետև նա կատարել էր ընտրությունը, և այդ ընտրութունը դրվելու է ամեն մարդու առջև, որ ծնվում է այս աշխարհում: Բարի և չարի գիտության ծառը դրված է ամեն մարդու առջև: Եվ երբ Ղովտը՝ նրա եղբորորդին և նրանց հովիվները սկսեցին վիճել արոտավայրերի պատճառով, Աբրահամը, արդար մարդ լինելով, նրանց ասաց. «Թող վեճեր չլինի մեր միջև: Պարզապես ընտրեք ձեր ճանապարհը»: Դա լինելու է ամեն հավատացյալի կյանքում: Այն այսօր իմ ու քո առջև է:

58 Ղովտը չէր կարծում, որ հետ կնահանջի, բայց նա գնաց հայացք գցելու Սոդոմի ուղղությամբ, որտեղ ամեն բան

հեշտ էր: Եվ շատ հաճախ մենք մեր հայացքն ուղղում ենք դեպի հեշտ ճանապարհը: «Ես կմիանամ այսինչ–այնինչ եկեղեցուն և, տեսնում եք, և ոչ ոք դրա դեմ ոչինչ չի ասի, որովհետև դա քաղաքի ամենամեծ եկեղեցին է: Հեշտ ճանապարհ: Շատ հաճախ մենք անում ենք դա, մենք սխալվում ենք:

59 Հիշե՛ք, եթե դուք հետևեք Քրիստոսին, մարդանց կողմից ատելի պիտի լինեք, որովհետև Քրիստոսի մեջ աստվածապաշտության կյանքով ապրող բոլոր մարդիկ հալածանք պիտի կրեն: Եվ եթե դու գալիս ես Քրիստոսին, չես գալու որևէ եկեղեցու կամ որևէ կազմակերպության կամ որևէ հավատամքի միջոցով: Դու գալու ես Արյան միջոցով, որը միակ ուղին է՝ ներս մտնելու համար: Եվ դու ոչ մեկին չես կարող բերել քեզ հետ, դու կանգնելու ես քո սեփական դավանանքի և հավատքի հիման վրա: Դու չես մտնի հովվի կամ քո մայրիկի հավատքի հիման վրա: Երբ դու գալիս ես Աստծո մոտ, գալիս ես որպես անհատականություն: Եվ շատ անգամներ մենք այդ հիմար ընտրությունները կատարում ենք:

60 Ի՞նչ կլիներ, եթե Ղովտը այն բանից հետո, երբ տեսավ, որ ամեն բան հեշտ է…Նա հայացքը հարեց այնտեղ, որտեղ ավելի շատ փող ու ժողովրդականություն կար, որովհետև նա օտարեկրացի, խելացի, կրթված, հոգեբանությամբ լի մարդ էր, և նա կարող էր որոշակի բաներ անել բայց և պահպանել իր կրոնը: Նա մտածում էր. «Ես հավատում եմ Աստծուն, ուստի ես ընդամենը կիջնեմ Սոդոմ, և ես, ես մի քիչ հավելյալ գումար կաշխատեմ, և մեծ մարդ, գուցե և հրաշալի մի քարոզիչ դառնամ»: Տեսնո՞ւմ եք, դուք պետք է ընտրություն կատարեք:

61 Եվ աշխարհականը նույնպես պետք է ընտրություն կատարի: «Ես կգնամ այնտեղ՝ այսինչ եկեղեցին: Ո՛հ, քաղաքում բոլորը կարծում են, որ սա ամենա–ամենան է: Քաղաքապետը պատկանում է այս եկեղեցուն»: Նա կարող է պատկանել մի եկեղեցուն, որն իրոք շատ լավն է, բայց այնուամենայնիվ, դու պետք է այդ եկեղեցին և նրա մարդկանց դատես Սուրբ Գրքի համաձայն: Երբեմն նրանք գնում են, որովհետև դա հանրաճանաչ է, մարդիկ, ովքեր գնում են այնտեղ, ավելի լավ են հագնվում: Եվ ահա այստեղ է, որ մենք ճակատագրական սխալ ենք անում: Այժմ ուշադրություն դարձրե՛ք սրան:

62 Եվ Աբրահամը, միակ բանը, որ նա կարող էր անել, երկրորդ ընտրությունը կատարելն էր: Եվ երբեմն

երկրորդ ընտրությունը ավելի լավն է, քան առաջինը, եթե դա այդպես է կատարվում: Տեսե՛ք, շատ չանցավ, երբ Ղովտը տեսավ այդ մեծ քաղաքը, թեև նա չտեսավ, թե իր կինը ինչպես աղե արձան դարձավ, նա չտեսավ քաղաքն այրող կրակը: Բայց Աբրահամը ընտրեց ճանապարհը Աստծո մի քանի անարգվածների հետ: Նա մնաց անապատում:

63 Իսկ ի՞նչ կլիներ, եթե Սառան ասեր…Հիշե՛ք, որ Սառան այդ երկրի ամենագեղեցիկ կինն էր: Սառայի նման գեղեցիկ կին չկար: Ով տեսնում էր նրան, սիրահարվում էր: Ինչ հեշտ կլիներ Սառայի համար նման ընտրություն կատարելը: Բայց նա ընտրեց մնալ Աբրահամի հետ:

64 Ո՛հ, կանայք, թույլ մի՛ տվեք, որ սատանան կուրացնի ձեզ, հանրաճանաչ դառնալով և *սրան* կամ *նրան* միանալով: Մնացե՛ք Քրիստոսի հետ: Որովհետև ժամը մոտ է, այս քաղաքի համար մեծ կործանումները առջևում են, ավելի վատը, քան Սոդոմի ու Գոմորի հետ: Սոդոմն ու Գոմորը դեռ գլուխ կգովային դրա համար:

65 Եվ այսպես, մինչ Աբրահամը ընտրեց այն ճանապարը, որը նրան տրված էր Աստծո կողմից, նա անպտուղ հողեր ուներ, նա ամենևին էլ չէր բարգավաճում: Բայց նա մի բան գիտեր, նա ծառայում և հավատում էր Աստծուն:

66 Մի օր երեք տղամարդ եկան նրա մոտ, նրանք փոշու մեջ կորած ու հոգնած էին, և Աբրահամը խղճաց նրանց, ասաց. «Մտե՛ք իմ վրանը և մի քիչ նստեք կաղնու տակ»: Եվ մինչ նա այնտեղ կանգնած խոսում էր նրանց հետ, իրենց զրույցից հասկացավ, որ նրանք ուղղակի սովորական մարդիկ չէին: Նրանք տարբերվում էին: Եվ Աբրահամը գնաց և մի հորթ մորթեց և պատրաստեց, և Սառային պատվիրեց հաց թխել և պատրաստել նրանց կերակրելու համար:

67 Այժմ հիշե՛ք, նրանցից երկուսը Հրեշտակներ էին՝ Հրեշտակներ մարդկային մարմնով, իսկ նրանցից մեկը Աստված Ինքն էր: Եվ այն Մեկը, Ով Աստված էր, մեջքով շրջված էր դեպի վրանը:

68 Իսկ Սառան մնացել էր վրանում: Սիրում եմ, երբ կինն այսպես իմանում է իր տեղը, դուրս չի գահս և չի խառնվում իր ամուսնու գործերին, ամեն անգամ, երբ ինչ–որ մեկը հյուր է գալիս: Բայց նա մնացել էր վրանում: Անկասկած, հնարավոր է, նա աման էր լվանում կամ ինչ–որ գործ անում:

69 Եվ Նա, Ով Աստված էր, շարունակ նայում էր Սոդոմի ուղղությամբ, և Նա հայտնեց նրանց, թե ինչ էր պատրաստվում անել: Այդ երկու Հրեշտակներն իջան այնտեղ Ավետարանը քարոզելու: Բայց Մեկը կանգնեց հետևում, դա Նա էր, Ով Աստված էր, և Նա ասաց. «Ես չեմ թաքցնելու Աբրահամից Իմ գաղտնիքները, որովհետև նա աշխարհի ժառանգն է լինելու»:

70 Ո՛հ, եկեղեղեցի, մենք այսօր իրավունք ունես իմանալու Տիրոջ գալստյան գաղտնիքները: Որովհետև. «Երանի՜ խաղաղարարներին, որովհետև նրանք Աստծո որդիներ պիտի կոչվեն: Երանի՜ նրանց, որ քաղցած ու ծարավ են, որովհետև նրանք պիտի հագենան: Երանի՜ նրանց, որ ստով մաքուր են, որովհետև նրանք պիտի տեսնեն Աստծուն: Երանի՜ հեզերին, որովհետև նրանք երկիրը պիտի ժառանգեն»: Հետևաբար, եթե Աստծո կենդանի եկեղեցին պիտի երկիրը ժառանգի, ուրեմն նրանից ոչ մի գաղտնիքներ պահված չեն:

71 «Այն ամենը, ինչ Հայրն Ինձ ասաց, Ես հայտնեցի ձեզ»,—ասաց Հիսուսը: Բայց նրանք չկարողացան հավատալ Նրան:

72 Այսպիսով, Աբրահամի օրերում, երբ Նա վկայակոչում էր նրանց, ասաց, թե ինչպես Աբրահամը խոսում էր Հրեշտակի հետ, և Նա մեջքով դեպի վրանն էր, ասաց Աբրահամին, որ կվերադառնա նրա մոտ և նա երեխա կունենա: Իսկ Սառան վրանում ծիծաղեց: Նա ասաց. «Սառան ինչո՞ւ ծիծաղեց»: Ի՞նչ էր դա ցույց տալիս: «Սառան ինչո՞ւ ծիծաղեց»: Դա եղավ կործանումից ընդամենը մի քանի ժամ առաջ: Կործանումից անմիջապես առաջ էր, որ երկնքից կրակ իջավ և քաղաքը այրեց, և այդ նշանը իրականացավ:

73 Եվ Հիսուսն ասաց. «Դուք սխալվում եք», աստվածաբանության մեծ դոկտորներին, կրոնասեր ազգին, որտեղ բառի բուն իմաստով միլիոնավոր մարդիկ հավատացյալներ էին: Նա ասաց. *«Դուք սխալվում եք, որովհետև ո՛չ Գրքերը գիտեք, ո՛չ էլ՝ Աստծո զորությունը»:* Այդպիսի սերնդին, ովքեր լավ վարժված մարդիկ էին, գիտնականներ էին և եկեղեցի էր բարձրացվել: Երբ երեխան ծնվում էր, նա եկեղեցու սեփականությունն էր համարվում: Դու պիտի իսրայելացի լինեիր: Ծնվելուց հետո ութերորդ օրը թլփաթություն էր, և դու ի սկզբանէ պիտի իսրայելացի լինեիր: Եվ քահանայությունը սերում էր ղեվտացիների տոհմից, ովքեր հազարավոր տարիների

ընթացքում վարժված էին Գրությունների մեջ։ Մինչդեռ Հիսուսն ասաց. «Դուք սխալվում էք, որովետև Գրքերը չգիտեք»։ Նրանք դա գիտեին ըստ իրենց դասագրքերի, նրանք դա գիտեին ըստ իրենց կատեխիզիսների, նրանք դա գիտեին ըստ իրենց սեփական աստվածաբանության։ Բայց Հիսուսն ասաց. «Դուք չգիտեք Դրանք՝ Գրքերը, ոչ էլ՝ Աստծո զորությունը։ Եթե Աբրահամին ճանաչեիք, Ինձ էլ կճանաչեիք։ Եթե դուք Աբրահամի զավակները լինեիք, Ինձ կճանաչեիք, որովհետև Աբրահամը ուրախացավ, երբ տեսավ Իմ օրը, որովհետև նա կանխատեսել էր այդ օրը։ Այն ժամանակ, երբ Ես մարդկային մարմնի մեջ կանգնեցի նրա առաջ և կատարեցի սա, նա իմացավ, որ դա Ես եմ և Ինձ «Էլոհիմ» անվանեց։ Բայց ահա Ես նույն բանն եմ անում ձեր առջև և դուք Ինձ «Բեեղզեբուղ» եք անվանում»։

«Ո՛հ,— ասում էին նրանք,— մենք Աբրահամին հայր ունենք»։

«Աբրահամին եք ձեր «հայրը» անվանո՞ւմ»։

74 Նա ասաց. «Մենք, մենք պատկանում ենք եկեղեցուն։ Մենք կրոնասեր ազգ ենք։ Մենք հզոր ժողովուրդ ենք։ Մենք Աստծո ժողովուրդ ենք»։

Հիսուսն ասաց. «Դուք ձեր հորից՝ սատանայից եք»։

75 Ես այդ սերունդը նմանեցրել եմ այս սերունդին, այսօր, երբ միլիոնավոր մարդիկ դավանում են քրիստոնեությունը և Աստծո մասին գիտեն այնքան, ինչքան հոտենտոտը Եգիպտոսի հրաշալիքների մասին։ Այսօր բառի բուն իմաստով միլիոնավոր քրիստոնեությունը դավանող տղամարդիկ և կանայք, ովքեր դավանում են Քրիստոսին, չգիտեն Նրա հարության զորության առաջին սկզբունքը և երբեք չեն ճաշակել Նրա շնորհը։ Նրանք երբեք Նրա զորությունը չեն զգացել։ Նրանց աչքերը կուրացած են Ճշմարտության հանդեպ։

76 Նա ասաց. «Նրանք կույր են և կույրերի առաջնորդներ։ Մի՞թե...եթե կույրն առաջնորդի կույրին, մի՞թե երկուսն էլ փոսը չեն ընկնի։

77 Այն ժամանակ նրանք մտածում էին. «Մենք քրիստոնյաներ ենք։ Մենք հավատացյալներ ենք։ Մենք պատկանում ենք ամենաբարձր եկեղեցիներին։ Մեր վարդապետները լավագույն վարժեցրած

գիտնականներն են»։ Մինչդեռ Հիսուսը նրանց ասաց, որ նրանք անգամ Գրքերը չգիտեն։

78 Տեսնո՞ւմ եք, թե Աստված ինչպես է այս բաները ծածուկ պահել աշխարհի իմաստունների ու գիտունների աչքերից և հայտնել մանուկներին, որոնք ուզում են սովորել։ Ո՛հ, Աստծո մեծ զորությունն ու ահսահմանությունը։ Ինչքա՜ն բարի է Նա նրանց հանդեպ, ովքեր ցանկանում են ուղիղ քայլեր Նրա առջև։ Ոչ մի բարի բան Նա ծածուկ չի պահի։

79 Եվ տեսնել այս օրը, երբ մեր ազգը, մեր աշխարհը ապակավված է նույն բանով։

80 Հիսուսը ցանկանում էր ճիշտ ձևով ուղղել նրանց։ Նրանք ասացին. «Ո՛հ, մեր հայրն Աբրահամն է։ Եվ մենք Փառքի մեջ կլինենք, Դու մի՛ անհանգստացիր դրա համար, որովհետև մենք հավատում ենք Աստծուն։ Մենք պրոֆեսորներ ենք և մենք հավատում ենք Աստծուն, և սովորեցնում ենք մեր ժողորդին։ Ո՞վ ես դու, որ եկել ես այստեղ այդ խորհրդավոր փոքրիկ հին նշանով, և փորձում ես դա Աստված անվանել։ Դու ոչ այլինչ ես, քան Բեեղզեբուղ»։ Ահա՛, խնդրեմ, նրանք ունեին իրենց հավատամքներն ու հարանվանությունը։

Հիսուսն ասաց նրանց. «Դուք սատանայից եք»։ Մտածե՛ք այդ մասին։

81 Եվ ես այդ սերունդը նմանեցնում եմ այս սերունդին, այսօր, երբ մենք ունենք եկեղեցիներին մրացած միլիոնավոր մարդիկ, նրանք տասնյակ հազարներով են։ Եվ Աստված իջնում է, որ նորից ապրի Իր եկեղեցու մեջ, և անի նույն գործերը, որոնք Նա արեց այնտեղ, որպեսզի Իրեն դարձնի նույնը երեկ, այսօր և հավիտյան։ Իսկ մարդիկ անընդհատ մերժում են դա, ոմանք հայտնի դառնալու, որանք էլ ընտրություն կատարելուց խուսափելու համար։ Դա անխուսափելի է։ Նրանք պետք է ընտրություն կատարեն։ Դու չես կարող չեզոք մնալ։ Դու պիտի կամ «այս», կամ «ոչ» ասես։ Դու այդ դռնով երբեք դուրս չես գա այնպիսին, ինչպեսին որ ներս ես մտել։ Դու չես կարող դա անել։ Դու պետք է ընտրություն կատարես։ Կատարե՛ք այն այսօր ի հոգուտ Քրիստոսի։

82 Նրանք կարծում էին, որ այն ամենը, ինչ պատկանում է եկեղեցուն, փրկվելու է։ Հիսուսն ասաց. «Նեղ է այն դուռը և նեղվածք է այն ճամփան, և քչերն են, որ գտնում են այն»։

83 Թույլ տվեք ինձ զգուշացնել ձեզ այսօր, եկեղեցի՛, զգույշ եցե՛ք։ Այսօր դրա համար ժամանակ է հարկավոր մեր այս ինքնահավան, ինքնաբավ, կեղծավոր սերնդի մեջ, որում մենք ապրում ենք։ Այս ժամում, երբ տղամարդիկ և կանայք կանգնում են եկեղեցում և եկեղեցական նստարաններում և Աստծուն փառաբանության երգեր են երգում, և դուրս են գալիս այդ եկեղեցուց և սիգարետ են ծխում, վիսկի են խմում, պարերի են գնում, և, և ապրում են աշխարհի համար, կեղտոտ, անվայել կատակներ են անում և իրենց «քրիստոնյա» են անվանում։ Երբ տղամարդիկ և կանայք հեռանում են ամբիոնից կամ եկեղեցուց և այն վայրից, որտեղ հարության Զորությունն է, որտեղ նույն Մեսիական նշանը շարժվում է նրանց մեջ և նոր արարած չեն դառնում Քրիստոսում, ուրեմն այստեղ ինչ–որ բան կարգին չէ։ Երբ լրագրերը խոսում են այդ մասին, ծովափից ծովափ, այս ծայրից մինչև այն ծայրը, հյուսիսի ցուրտ շրջաններից մինչև հարավի տրոպիկական ջունգլիները Աստված ուղղարկում է դա, իսկ մարդիկ անընդհատ մերժում են դա։ Այդ դեպքում մենք ի՞նչ կարող ենք ասել, մենք ի՞նչ կարող ենք անել։ Մենք դիմում ենք Գրքերին, որտեղ Նա ասաց. «Նեղ է այդ դուռը և նեղվածք է այն ճամփան, և քչերն են, որ գտնում են այն»։

84 Նա ասաց. «Ինչպես Նոյի օրերում էր, այնպես էլ կլինի Մարդու Որդու գալստյան ժամանակ»։ Լսե՛ք, Նոյի ժամանակ աշխարհը բնակեցված էր մոտավորապես այնպես, ինչպես այսօր։ Նրանց գիտությունը գերազանցում էր մերը։ Նրանք կառուցում էին սֆինքսներ, բուրգեր և անում էին բաներ, որոնք մենք չենք կարող անել այսօր։ [Ձեռագրված հատված։ Ծան. Խմբ.]։ Գերազանզող, մեծ, խելացի մարդիկ էին։ Եվ հիշե՛ք, գիտությունն այսօր ասում է. «Կեսգիշերից մեկ րոպե է պակաս»։ Մեկ րոպե է պակաս, նախքան ժամացույցը կխփի մահվան ժամը։ Ավելի ուշ է, քան մենք կարծում ենք։ Հուսով եմ, որ, հավատում եմ, որ Սուրբ Հոգին կդնի յուրաքանչյուր հավատացյալի սրտում. «Ինչպես Նոյի օրերում էր»։

85 Քանի՞ հոգի փրկվեցին այդ սերնդից Նոյի օրերում։ Ութ, այդ բազմաթիվ միլիոներից ութ հոգի։ Նա ասաց. «Այնպես էլ կլինի Մարդու Որդու գալստյան ժամանակ»։

86 «Եվ ինչպես Սոդոմի օրերում էր, այնպես էլ կլինի Մարդու Որդու գալստյան ժամանակ»։ Մոտավորապես տասնյակ հազարավորներից երեք հոգի փրկվեցին։

87 Այդ դեպքում դուք ինձ կասեք. «Քարոզի՛չ, ի՞նչ կասեք բոլոր այն հազարավորների մասին, որ գալու են Նրա հետ»: Եղբա՛յր, դա կազմվել է բազում սերունդների ընթացքում:

88 Ես կզարմանամ, եթե այս սերունդից մի դյուժին դուրս գա: «Նեղ է այդ դուռը և նեղվածք է այն ճամփան, և քչերն են, որ գտնում են այն»:

89 Ո՜հ, ես գիտեմ եկեղեցիներ, որոնք ասում են. «Եթե ձեր անունը գրանցեք մատյանում և *սրա* անդամը դառնաք, ձեզ հետ ամեն ինչ կարգին կլինի»: Սուրբ Գրքում այդպիսի բան չկա: Եթե ամենքը, որ գրված են մատյանում և եկեղեցում մտնեն, ապա միլիարդավորներ կլինեն, և բոլորն էլ կմտնեն: Այդ դեպքում բոլոր տեսակի հոգիները կմտնեն այնտեղ, և ի՞նչ վիճակում կլինի Երկինքը: Մտածե՛ք այդ մասին:

90 Ինչ-որ մեկը կարող է ինձ ասել. «Մի րոպե սպասեք, եղբայր Բրանհամ: *Այսպես և այնպես,* ես լսել եմ, թե նրանք ինչպես են լեզուներով խոսում, ես գիտեմ, որ նրանց մոտ դա կհաջողվի»:

91 Դա չի նշանակում, որ դա իրենց հաջողվելու է: Ա Կոր.13-րդ գլխում Պողոսն ասում է. *«Եթե մարդկանց և հրեշտակների լեզուներով խոսեմ և սեր չունենամ, ես ոչինչ եմ»:*

92 Ո՛հ, ես գնացել եմ *այսինչի, այնինչի* հավաքույթին: Ո՛հ, նա հզոր, զորավոր գործեր էր կատարում: Ես տեսա, թե ինչպես նա տեսողություն տվեց կույրին»:

93 Մինչդեռ նա կարող է կորսված լինել: «Ծատերն այն օրը կգան Ինձ մոտ և կասեն. «Տե՛ր, չէ՞ որ Քո անունով քարոզեցի, մարգարեացա: Չէ՞որ Քո անունով չար ոգիներ հանեցի, Քո անունով շատ զորավոր գործեր կատարեցի»: Նա կասի. *«Ինձանից հեռո՛ւ գնացեք, դո՛ւք՝ անօրենություն գործողներ, երբեք ձեզ չեմ ճանաչել»:* «Նեղ է այդ դուռը և նեղվածք է այն ճամփան, և քչերն են, որ գտնում են այն»:

94 Թո՛ւյլ տվեք ձեզ մի քանի թվեր ասել, որոնք կցնցեն ձեզ: Ըստ բժշկական գիտության Չիկագո քաղաքում, բժշկական վիճակագրության համաձայն միայն Չիկագո քաղաքում երեսուն օրվա ընթացքում բժիշկները երեսուն հազար աբորտի դեպքեր են գրանցել: Իսկ քանի՞սն են այդ փոքրիկ հաբերը և նման բաներ ընդունում աբորտ անելու համար:

95 Վիճակագրությունը ցույց է տալիս, որ Միացյալ Նահանգներում ավելի շատ ապօրինի երեխաներ են ծնվում, քան սուրբ ամուսնության մեջ ծնված երեխաները: Դուք գիտեի՞ք, որ Աստվածաշունչն ասում է Երկրորդ Օրինաց 14.2 համարում, որ «ապօրինին, չորս հարյուր տարի է հարկավոր դրանից ազատվելու համար»: Նրանց երեխաների, երեխաների, երեխաների երեխաները չորս հարյուր տարի՝ տաս սերունդ չեն կարող Տիրոջ ժողովքի մեջ կանգնել: Քառասուն տարի մեկ սերնդի մեջ, որովհետև նրանց նախա-նախա-նախա-նախա-նախա-նախա-նախա-նախահայրը եղել է ապօրինի, նա պատկերից դուրս է: Հիմա ի՞նչ: Ցույց տվեք ինձ, թե որտեղ է այն փոխվել:

96 Ինչի՞ն ենք մենք հասել: Իսկ այժմ ապօրենիները, պոռնկության և տղամարդու պես հագնված մեղավոր կանանց պատճառով, ինչը գարշելի է Աստծո առաջ, սիգարետ ծխոխները, կոկտեյլ խմողները, այսպես կոչված, քրիստոնեություն դավանողները: Աստված մի արասցե մարմնավաճառների նման փունջ: Դա ճիշտ է: Հետո իրենց քրիստոնյաներ են անվանում: Զարմանալի չէ, որ Հիսուսն ասաց. «Նեղ է այն դուռը և նեղվածք է այն ճամփան, և քչերն են, որ գտնում են այն»:

97 Նրանք իրենց չեն խոնարհեցնելու: Նրանք խստաբարո են: Տեսե՛ք, երբ Դավիթին ասվեց իր կատարած մեղքի մասին, նա արագ ապաշխարեց, և Աստված սիրեց նրան դրա համար: Դու նրանց ասում ես իրենց մեղքերի մասին, նրանք ասում են. «Ես իմ ոտքն էլ չեմ դնի այստեղ»: Ինչո՞ւ: Որովհետև նրանք գնալու բավականաչափ տեղեր ունեն, նրանք կարող են գնալ այդ անօրինական որջերը, որոնք կհամակերպվեն նմանների հետ: Բայց ժամանակն է, որ քարոզիչները հագնեն Աստծո ողջ սպառազինությունը և քարոզեն Աստծո Խոսքը՝ Ավետարանը առանց փոխզիջման: Տղամարդիկ պետք է խոնարհեցնեն իրենց:

98 Քրիստոնյաների մեջ այլևս անկեղծություն չկա: Նրանք ուզում են ասել. «Ես մեթոդական եմ, ես մկրտական եմ, ես հոգեգալստական եմ», Աստծո համար դա *այսքան էլ* [Բրանհամ Եղբայրը մատներով ճտտացնում է: Ծան. Խմբ.] նշանակություն չունի:

99 «Ես խոսել եմ լեզուներով, ես հրաշքներ եմ գործել»: Մենք ամբողջ շեշտը դրա վրա ենք դնում, այն ժամանակ, երբ դա ամենակուրացնող բաներից մեկն է, որոնք

նրանք կարող են անել։ Անկասկած։ Անձրևը իջնում է մեղավորների վրա այնպես, ինչպես և արդարների վրա։ Անձրևը ջրում է ցորենը այնպես, ինչպես ջրում է որոմը, Ռո՛յ։ Նույն անձրևն է, նույն Սուրբ Հոգին իջնում է մարդկանց վրա։ Դա դեռ չի նշանակում... Նրանց բնույթը ներսից պետք է փոխվի։ Ոչ թե արտաքին դրսևորում կամ ցուցադրում, այլ կենդանի Աստծո Հոգին ներսից, որ դարձնում է այդ մարդուն նոր արարած, որ խոնարհեցնում է նրա սիրտը Աստծո առջև։

100 Դուք կասեք. «Քարոզի՛չ, դու ինձ ուզում ես ասել, որ կասկածում ես, որ այս միլիոններից և չորս միլարդ ժողովրդից, որ կա աշխարհում, մի դյուժին մարդ էլ դուրս գա»։ Ես կասկածում եմ, այդյո՞ք մի դյուժին կլինեն նրանք, ովքեր կհափշտակվեն։ Մտածե՛ք այդ մասին։ Ես ասում եմ այն, ինչ Հիսուսն է ասել այստեղ՝ Ավետարանում։ Մտածե՛ք այդ մասին։

101 Ինչո՞ւ է բանը դրան հասել։ Որովհետև մարդկանց մեջ անբարոյականություն է, ապօրինի երեխաներ են սկսել ծնվել, դա ջնջում է նրանց։ Տեսնում եք, մենք ժամերով կարող էինք կանգնել այստեղ դարսելով այս բաները, և դուք կտեսնեք, որ մենք ապրում ենք ապականված, անիծված, մինչև ուղնուծուծը փտած մարդկանց սերնդի մեջ։ Զարմանալի չէ, որ նրանք ոչ մի նշաններ չեն կարողանում տեսնել, զարմանալի չէ, որ նրանք չեն լսելու Բարի լուրը, նրանք կարծրացած են, մինչդեռ կրոնասեր են ու բարեպաշտ։

102 Մի՞թե Հիսուսը չասաց, որ՝ «Հոգին պարզ ասում է, որ վերջին օրերում նրանք կլինեն հանդուգն, գոռոզ, ավելի հաճույքներ սիրող, քան աստվածասեր, անհաշտ, անժուժկալ, դաժան, բարուն թշնամի, աստվածապաշտության կերպարանքն ունենալով»։ Տեսնո՞ւմ եք։ Ո՛հ, դուք կարող եք աղաղակել, անշուշտ։ Դուք կարող եք խոսել լեզուներով, անշուշտ։ Հավատքը դևեր է հանելու, անշուշտ։ Բայց դա այն չէ, ինչի մասին, որ մենք խոսում ենք։

103 Այդ դեպքում դուք ինձ կհարցնեք. «Բրանհամ եղբայր, ո՞րն է քրիստոնյայի կերպարը։ Ո՞վ է փրկվելու։ Դո՞ւք եք փրկվելու, Բրանհամ եղբայր։ Ես դա թողնում եմ Աստծուն։ Ես չգիտեմ։ Ես հավատում եմ, որ կփրկվեմ։ Ես ամեն օր իմ կյանքը համեմատում եմ Խոսքի հետ։ Եթե այն չի համապատասխանում այս Խոսքին, ուրեմն ինչ-որ բան կարգին չէ, ես պետք է հետ դառնամ և շտկեմ։

104 «Լավ,— ասում են,— Բրանհամ եղբայր, եթե մարդիկ խոսում են լեզուներով, մի՞թե դա չի նշանակում, որ նրանք փրկված են»։ Ո՛չ, պարո՛ն։ Ո՛չ, իհարկե։ Ես լսել եմ, որ վհուկներն ու կախարդները խոսում եմ լեզուներով, բոլոր տեսակի հիմարություններ։ Ես տեսել եմ, որ մարդիկ խոսում են լեզուներով, իսկ ապրում են ուրիշ տղամարդու կնոջ հետ։ Ես տեսել եմ, որ խոսում են լեզուներով, ցատկում և աղաղակում են այնպես կարծես տունը այրվում է, իսկ հետո գնում և կեղտոտ գործարքներ են անում, գողանում, սուտ խոսում և այլն։ Ինչպե՞ս դուք կարող եք դա ակնկալել։ Ո՛չ, պարո՛ն։

105 Պատկանում են եկեղեցուն, եկեղեցում սարկավագներ են, հնարավորինս բարեպաշտ են։ Մի՞թե դուք կարծում եք նրանք կիրակի օրը բենզին կգնեն։ Ո՛չ։ Բայց երկուշաբթի օրը կանեն մի բան, որը կեղտոտ, փթաց ու ստոր է։ Աստված բնակվում է սրտի մեջ, ոչ թե արտաքինում, դա մի բան է, որ սրտից է բխում։

106 «Նեղ է այն դուռը և նեղվածք է այն ճամփան, և քչերն են, որ գտնում են այն»։ Ինչպես Նոյի օրերում եղավ, այդ միլիոններից ութ հոգի էին, ինչպես Սոդոմի օրերում եղավ՝ միլիոններից երեքն էին, այնպես էլ մարդու Որդու գալստյան ժամանակ կլինի։

107 Եվ դուք տեսնում եք այս ապականությունը, որի մեջ մենք գտնվում ենք։ Դուք տեսնում եք մարդու բոլոր երևակայությունները, նա դուրս է գալիս այնտեղ, և սատանան այնպես է անում, որ ամբիոնի հետևում խելացի քարոզիչներ են կանգնում և թույլ են տալիս մարդկանց համակերպվել դրա հետ։

108 Մի անգամ մեկն ինձ ասաց. «Ես ձեզ չէի հրավիրի իմ ամբիոնի հետև, որովհետև դուք իմ կանանց կխելագարեցնեիք»։ Ոչ, նրանք արդեն այդպիսին են։ Դա իրենց խելքի կբերեր, ասել նրանց այնտեղ, որ դադարեն հագնել այդ հագուստները և այլն։ Ինչ–որ մեկը պետք է անի դա։

109 Ես հարցրեցի իմ կնոջը. «Ես խենթացե՞լ եմ։ Ես խելքս թոցրե՞լ եմ։ Կամ, ի՞նչ է կատարվում ինձ հետ»։ Իմ մեջ մի բան կա, որ հանգիստ չի տալիս։ Ես պետք է Դա ասեմ, ինձ չի հետաքրքրում, թե ինչ–որ մեկը ինչ է ասում։

110 Ասում են. «Դու կփչացնես քո ծառայությունը»։ Դե, ցանկացած ծառայություն, որը կփչացնի Ավետարանը, պետք է փչանա։

Թող Աստված մեզ տա քաջություն, որ կանգնենք այն բանի համար, ինչը Ճշմարտություն է, և ասել Ճշմարտությունը դրա վերաբերյալ: Դա մեղք է, ամոթ է:

111 «Նեղ է այն դուռը,— Հիսուսն ասաց,— և նեղվածք է այն ճամփան»: Եվ դուք, որ կարծում եք, թե միլիոնները. և դուք բոլորդ՝ մեթոդականներդ, մկրտականներդ, երիցականներդ, հոգեգալստականներդ ներս կմտնեք, այն օրը դուք հիմար վիճակում կհայտնվեք: Հիսուսն է ասում. «Շատերը կգան և կնստեն Թագավորության մեջ, կասեն. «Ես իրավունք ունեմ այստեղ լինելու»: Նա ասաց. «Բայց Թագավորության որդիները դուրս կհանեն նրանց: Այնտեղ կլինի լաց, ողբ և ատամների կրճտելը»: Ավելի լավ է այսօր գույքագրում անես, քրիստոնյա՛: Այնտեղ կլինեն տասնապատիկ միլիոնավոր անգամ միլիարդավոր դավանող և իրենց կյանքում համոզված քրիստոնյաներ, ովքեր չեն մտնի այդ դարպասներով: Հիսուսն է այդպես ասում:

«Քանի՞սն են մտնելու»:

112 Ես չգիտեմ, թե քանիսն են մտնելու: Միակ բան է՝ «Տե՛ր, թույլ տուր ինձ լինել դրանցից մեկը»: Վերջ: Նա է Դատավորը: «Թույլ տուր ինձ լինել մեկը»:

113 Դուք կասեք. «Եղբա՛յր Բրանհամ, այդ դեպքում ինչպե՞ս դու կարող ես ասել, երբ նա քրիստոնյա է»:

114 Ես չգիտեմ: Բայց թույլ տվեք ձեզ ասել, թե ինչ է ասում Սուրբ Գիրքը: Անշուշտ, դուք հավատում եք Դրան: Երբ Սուրբ Հոգին ուղարկվեց երկրի վրա, Աստված խոսեց Սուրբ Հոգու միջոցով: Նախ Նա հրեշտակ ուղղարկեց: Եվ Նա ասաց. «Քաղաքի և մարդկանց միջով անցիր ու նշան դիր նրանց ճակատներին, ովքեր հեծում ու ողբում են պղծությունների համար, ովքեր ուղղում են այդ բանները»:

115 Ի՞նչ է պղծությունը: Մի կին, որ հագնում է տղամարդու համար նախատեսված հագուստ: Դա տրտմեցնում է Աստծուն: Երբևէ եղե՞լ եք այնտեղ, որտեղ ինչ-որ բան պիղծ է: Որքա՞ն զզվելի է դա ձեզ համար: Դու չես կարողանում դա տանել: Մի կին, որ հագնում է տղամարդու համար նախատեսված հագուստ, ստիպում է Աստծուն այդպես Իրեն զգալ: Դու կարող ես երգել երգչախմբում, կարող ես ամեն օր աղոթել և ամեն օր աղաղակել, կամ ամեն օր ապրել Աստծո համար, Աստծո ներկայության մեջ դուք դատապարտված ես: Դա հենց

այն է, ինչ ասում է Սուրբ Գիրքը։ «Պղծությո՛ւն»։ Իսկ նրանք, ովքեր սատարում ես այդպիսիններին, դրանց հետ մասնակիցներ են։

116 Թող Աստված մեզ շնորհ տա, որ հակառակ կանգնենք դրան։ Եթե դու մի կողմ պիտի քաշվես, կանգնի՛ր այնտեղ և պահի՛ր Աստծո Խոսքը քո ձեռքերի մեջ։ Այն երբեք ամոթով չի թողնի։

117 Եվ այսպես, մենք հիմա հասել ենք այն օրվան, երբ արդեն ժողովրդի պղծությունն է։ Եվ հրեշտակները նորից դուրս եկավ կնիք դնելու։ Գտե՛ք ինձ համար Ջեֆերսոնվիլում մի մարդ, եթե ուզում եք իմանալ, թե ով է դա անելու, գտե՛ք ինձ մեր քաղաքում մի մարդու, ով հեծում ու ողբում է, շարունակ մտահոգված ու զզված է և աղոթում է քաղաքում կատարված պղծությունների համար։ Դուք կարո՞ղ եք բարձրացնել ձեր ձեռքը և ցույց տալ մի մարդու վրա։ Այդ դեպքում վերցրե՛ք սուրբգրային այս հատվածը. «Նեղ է այն դուռը և նեղվածք է այն ճամփան, որ դեպի կյանք է տանում, և քչերն են, որ գտնում են այն»։ Դրանք միակնեն, որքեր կնքվեցան։

118 Ո՜հ, ես կարող եմ ձեզ ցույց տալ շատերին, ովքեր գնում են եկեղեցի։ Ես կարող եմ ձեզ ցույց տալ շատերին, ովքեր երգում եմ երգչախմբում։ Ես կարող եմ ձեզ ցույց տալ շատերին, ովքեր սովորեցնում են Կիրակնօրյա դպրոցում։ Ես կարող եմ ձեզ ցույց տալ շատերին, ովքեր մեծ ժողովքների առաջնորդներ են։ Ես կարող եմ ձեզ ցույց տալ շատերին, ովքեր աղաղակում են, շատերին, ովքեր խոսում են լեզուներով, շատերին, ովքեր աշխատում են Ավետարանչական գործում։

119 Բայց ցույց տցեք ինձ մեկին, ով իր սրտի խորքում աշխարհի մեղքերի համար այնքա՜ն մտահոգված լինի։ Ցույց տվեք ինձ մի քարոզիչ, ով կարող է այսօր կանգնել և դատապարտել այդ հարանվանություններին։ Ցույց տվեք ինձ մի քարոզիչ, ով կկանգնի և կասի այս բաները և կդատապարտի իրենց հարանվանություններին։ Նա կնախնտրի չանել դա, որովհետև դուրս կտշեն նրան, դա նրա սննդի տոմսն է։

120 Զարմանալի չէ, որ Բիլլի Գրեհեմն ասել էր Ձեք Մուրին, չեր հասկանում, թե իմ ժողովներն ինչպես ես կանգուն մնում, ասել էր. «Նա ոչ մկրտական է, ոչ մեթոդական, ոչ էլ հոգեգալստական է,— ասել էր,— իսկ նրանք բոլորն էլ նրա դեմ են։ Իհարկե, ես դա չեմ ասում…Պատճառը, թե ինչու

ես ասացի այն է, որ ես դա չեմ կարող ասել հանրության մեջ: Ես դա ասում եմ իմ սեփական եկեղեցու համար: Ես պայքար եմ տանում, որովհետև սա իմ փորձության ժամն է:

121 Նրանք ասում են. «Եթե դու գաս, ոչ մի խնդիր չի լինի, բայց Դրա մասին ոչինչ չասես»: Ավելի լավ է դու լուռ մնաս:

122 Ես կքարոզեմ այն, ինչ Աստված է ասել, որ քարոզեմ: Դա ճիշտ է: Այդ ութից մեկն ինչ–որ մի վայրում կլինի: Նրանցից մեկը ինչ–որ մի վայրում կլինի: Բայց այն օրը ես չեմ ուզում մեղավոր ճանաչվել, ասելով, որ ես փոխզիջման եմ գնացել ինչ–որ հավատամքի կամ որևէ եկեղեցու ուսմունքի, կամ որևէ հարանվանության պատճառով: Ես քարոզել եմ Ճշմարտությունը:

123 Նրանք ասում են. «Բրանհամ եղբայր ինչո՞ւ դու, ինչո՞ւ քո ծառայությունը, որ թվում է այդպես զորավոր, չի փայլում այնպես, ինչպես ուրիշ մարդիկ են անում»:

124 Բանն էլ հենց դրանում է: Ահա՛: Ես գալիս եմ քաղաք, դուք կարծում եք Աստծո Ժողովները կհամագործակցե՞ն ինձ հետ: Ոչ, այն, ինչին ես հավատում եմ, ոչ: Գուցե եկեղեցիներից մեկը: Կարծում եք մեթոդիստները կհամագործակցե՞ն: Փորձե՛ք և կտեսնեք: Մի շաբաթով եղե՛ք իմ մենեջերը: Եթե դու գնաս, պիտի գնաս Հիսուսի Անունով: Դա ճիշտ է:

125 Ո՛հ, անշուշտ, նրանք ընդունում են քեզ, անշուշտ, ինչ–որ վայրում ընդունում են քեզ, և այնպես, որ դու ոչ մի ձևով կապված չլինես նրանց հետ: Իսկ հետո, երբ հեռանում ես, ասում են. «Ո՛հ, Բրանհամ եղբայրը մի քիչ խանգարված է, գիտեք: Նա...»:

126 Եթե ես խանգարված եմ, ուրեմն Աստվածաշնչի Ուսմունքն է խանգարված: Ահա, թե ինչ է ասում Աստվածաշունչը: Այո՛, պարո՛ն: Հսկե՛ք:

127 Հիսուսն ասաց. «Ինչո՞ւ եք ինձ «Բեեղզեբուղ» անվանում: Դուք հավատացիք Սողոմոնին, նրա խորաթափանցության նշանին: Դուք հավատացիք նրա օրվան: Հարավի թագուհին երկրի ծայրերից եկավ այդ պարգևը տեսնելու, և նա հավատաց դրան, երբ տեսավ: Իսկ դուք անեն օր նստում և նայում եք դրան ու չեք հավատում»:

128 Նրա սեփական եղբայրներն էլ չհավատացին Նրան: Ասաց. «Դուք գնացեք այդ տոնին,— ասաց Նա,— բայց Ես հիմա չեմ գնում»: Նա ուրիշ ճանապարհով գնաց,

որովհետև Նրա սեփական եղբայրները չէին հավատում Նրան: Դա ճիշտ է: «Նեղ է այն դուռը և նեղվածք է այն ճամփան, և քչերն են, որ գտնում են այն»:

129 Երբ գործը հասավ աշակերտներին, բացահայտմանը, որտե՞ղ էին նրանք: Մի կին և մի տղամարդ էր կանգնած խաչի մոտ Նրա հետ, Հովհաննեսն ու Մարիամը: Մնացածները անհետացել էին:

130 Սա է բացահայտումը: Սա է ժամանակը: Ահա, թե երբ է Աստված գործեր անում: Ահա, թե երբ է Մեսիան երկրի վրա: Ահա, թե երբ է Աստծո զորությունը գործում Իր ժողովրդի մեջ: Իսկ նրանք իրենց «սուրբ թռչկոտողներ, խենթեր, խելքները թոցրածներ» են անվանում, այ այդպես: Բայց ժամը եկել է:

131 Անշուշտ, մեծ հիասթափություններ կլինեն դատաստանի օրը:

132 Ո՛հ, ալկոհոլ վաճառողը գիտի, թե որտեղ կլինի դատաստանի օրը: Գարեջուր խմողն էլ գիտի, թե որտեղ կլինի: Ծնացող կինը նույնպես գիտի, թե որտեղ է կանգնելու: Խաղամոլն էլ գիտի, թե որտեղ է կանգնելու: Հարբեցողը գիտի, թե որտեղ է կանգնելու: Նա հիասթափված չի լինի:

133 Բայց հիասթափված կլինեն նրանք, ովքեր կարծում էին, թե ճիշտ են եղել: Ահա, թե որտեղ կլինի հիասթափություն: «Երբ նրանք կբարձրանան այնտեղ և կասեն. «Անշուշտ, մենք Քո Անունով ենք դևեր հանել: Մենք քարոզիչներ ենք: Մենք այսինչ, այնինչ եկեղեցիներին ենք պատկանում: Մենք հզոր հրաշքներ ենք կատարել: Ո՛հ, մենք քարոզել ենք: Անշուշտ, ես եղել եմ, ես կարգադրիչ եմ եղել եկեղեցում: Ես եպիսկոպոս եմ եղել: Ես *սա եմ* եղել»: *Ինձանից հեռո՛ւ գնացեք, դո՛ւք՝ անօրենություն գործողներ, երբեք ձեզ չեմ ճանաչել*»: Ահա, խնդրեմ: Դա է հիասթափությունը: Նա ասաց. «Նրանց երեխաների երեխաները կմտնեն և կնստեն Թագավորության մեջ, կասեն. «Մենք իրավունք ունենք այստեղ լինելու», և նրանց դուրս կնետեն դրսի խավարի մեջ, ուր կլինի լաց, ողբ և ատամների կրճտոց»: «Նեղ է այն դուռը և նեղվածք է այն ճամփան, որ դեպի կյանք է տանում, և քչերն են, որ գտնում են այն»:

134 Դիմում եմ ձեզ՝ սիրելի՛ ժողովուրդ, այս առավոտ, լսե՛ք սա: Ես դա ինձանից չեմ ասում: Ես պատասխանատու եմ Այս բանն ասելու համար: Դա է այն ամենը, ինչի համար

ես պատասխանատու եմ։ Եթե ես իմ կյանքում էլ ուրիշ քարոզ չքարոզեմ, դա Ճշմարտություն է, ընդամենը մի քանի հոգի է փրկվելու։ Պարզապես հիշե՛ք դա. ընդամենը մի քանիսը։ Եղե՛ք նրանցից մեկը։

135 «Ովքե՞ր են նրանք, եղբայր Բրահնամ»։ Ես չգիտեմ։ Ոչ ոք չգիտի։ Մենք ահով ու դողով ենք գործադրում մեր փրկությունը։

136 Բայց դուք շարվեք Աստծո հետ։ Եթե ձեր սիրտը չի բաբախում այդ Աստվածաշնչի հետ, ուրեմն այնտեղ ինչ–որ բան կարգին չէ, ինչ–որ բան կարգին չէ։ Կարևոր չէ, թե ձեր եկեղեցին ինչ է ասում, դուք չեք կարող դրանով մտնել։ Դուք պետք է մտնեք Աստծո ասածի համաձայն։ Սա է այն Գիրքը, որով դուք դատվելու եք, Աստվածաշունչը։ Մնացե՛ք Դրա հետ։

137 «Ո՛հ,— դուք կասեք,— դե, ես մկրտվել եմ Տեր Հիսուսի Անունով»։ Դա ճիշտ է, դա Սուրբ Գրքի համաձայն է։ Բայց եթե այդ կյանքը չի հաջորդում դրան, մկրտվեուց ձեզ շատ օգուտ չի եղել։

138 Դուք կասեք. «Դե, ես ընդունել եմ Սուրբ Հոգին»։ Դա լավ է, դա այն էր, ինչ դու պիտի անեիր։ Բայց եթե ներսում կյանք չկա։

139 Հիշե՛ք որոմները ստանում են նույն զորությունը, որն իջնում է ցորենի վրա այն աճեցնելու համար, ստիպում է որոմներին նույնպես աղաղակել։ Փոքրիկ, թոռոմած որոմն ուղղվում է և նույքան ուրախանում է, որքան և ցորենը։ Դա ճիշտ է, ապրում է նույն կյանքով։ Մեղավորն էլ կարող է կանգնել Աստծո ներկայութան մեջ, հաղթանակ աղաղակել և քրիստոնյայի պես ապրել։ Բայց եթե այնտեղ՝ սրտում, տարբերվող ինչ–որ բան չկա։ Դու կարող չար ոգիներ հանելու նույն զորությունն ունենալ։ Հիսուսն է այդպես ասում։ Նա կարող է Ավետարանը քարոզել նույնքան լավ, որքան ցանկացած այլ քարոզիչ կարող է անել։ Դա հենց այն է, ինչ Հիսուսն է ասել։ Աստվածաշունչն է սովորեցնում դա։ Այո՛, պարո՛ն։ «Եթե մարդկանց և հրեշտակների լեզուներով խոսեմ, եթե իմ մարմինը կրակի մատնեմ որպես զոհ, իմ ամբողջ ունեցվածքը տամ աղքատներին կերակրելու համար, ես, ես լեռներ տեղափոխելու հավատք ունեմ, ես այս բոլոր բաներն անում եմ, քարոզում են Նրա Անունով, դևեր եմ հանում Նրա Անունով,— նա ասաց,— ես ոչինչ եմ»։ Այսպիսով, նա կարողանում էր դա անել, և «ոչինչ» էր։ Ըմբռնո՞ւմ եք միտքը։

140 Հիմա, այն ինչ պետք է անեք՝ սրտում քրիստոնյա լինել, այժմ մտեք նեղ դռնով: Որովհետև ընդարձակ է այն ճամփան, որ դեպի կորուստ է տանում, և հավատացյալների այս սերունդից միլիոնավոր անգամ միլիոններ են մտնելու դրանով: Որովհետև նեղ է այն դուռը և նեղվածք է այն ճամփան, պարզապես դու և Քրիստոսը միայն:

141 «Նեղ է այն դուռը և նեղվածք է այն ճամփան, որ դեպի կյանք է տանում, և քչերն են, որ գտնում են այն»: Դա մեր Տիրոջ Խոսքերն են: Ո՛հ: Ի՞նչ էր Նա անում: Այնտեղ կանգնած՝ զանազանում էր նրանց մտքերը:

142 Եվ նա ասաց. «Նա Բեեղզեբուղ է: Դե, ինչպե՞ս կարող է Նա Աստված լինել: Նա Մարդ է: Որտեղի՞ց է այս իմաստությունը գալիս»,— ասում էին նրանք Նրա սեփական քաղաքում:

143 Երբ քայլում ես այս քաղաքում, թվում է թե...Ես սա չեմ ասում ձեզ անարգելու համար, դուք քրիստոնյա եք, դուք սիրում եք ինձ: Դու քայլում ես այստեղ՝ այս քաղաքում, և թվում է, թե սատանայի զորությունը տապալում է քեզ: Այս վայրը դատապարտցած է: Այս քաղաքը դատապարտված է:

144 Ի՞նչ էր ասել Բիլլի Գրեհեմը, երբ մտել էր Լուիզվիլ: Նա ասել էր, որ դա իր կյանքում երբևէ տեսած «ամենադիվային զորությով օժտված վայրն է»: Թերթում էր տեղադրված, նա ասել էր. «Դու պարզապես զգում ես սատանայի ճնշումը»:

145 Անշուշտ, ես դա զգում եմ: Ինչո՞ւ: Որովհետև սա իմ սեփական տունն է: Երբ Հիսուսը Իր սեփական տունը վերադարձավ, Նա ասաց, որ շատ զորավոր գործեր չկարողացավ անել նրանց անհավատության պատճառով: Ասաց. «Մարգարեն, քարոզիչը անարգված չէ, բացի իր սեփական, իր սեփական գավառում, իր ժողովրդի մեջ»: Տեսնո՞ւմ եք: Դու ոչինի չես կարող անել, Սուրբ Գիրքն է այդպես ասում: Հասկանո՞ւմ եք:

146 Եվ այսպես, երբ դու քայլում ես այստեղ՝ այս քաղաքում: Եվ չասեք, թե չգիտեիք: Ես հանդիպում եմ մարդկանց, ովքեր սեղմում են իմ ձեռքը և ասում են. «Ո՛հ, Բրանհամ եղբայր, ես ձեզ սիրում եմ»: Իսկ դու գիտես, որ դա սուտ է: Դու գիտես, որ դա սուտ է: Եթե Աստված կարող է ինձ հայտնել սրտերի գաղտնիքը, ինչո՞ւ Նա չի կարող դա ինձ ասել:

147 Անկասկած, և դա հենց ձեր ժողովրդի և այս քաղաքի մեջ է: Երբ նրանք քեզ տեսնում են, ասում են. «Գիտե՞ս, ես այնտեղ տեսել եմ սա և սա...»:

«Որտե՞ղ: Որտե՞ղ է դա եղել»:

«Այնտեղ...»:

«Ո՜հ: Մենք ճանաչում ենք այդ տղային»:

148 Դու դա զգում ես: Թույլ տվեք ձեզ ասել, թողեք ինչ-որ մեկը գա ձեր տուն, ում դուք այնքան էլ դուր չեք գալիս, ուղղակի մի քիչ նստի ձեր տանը և կունենաք այդ տարօրինակ զգացողությունը: Բազմապատկե՛ք դա հիմա տասնչորս հազարի, այնժամ կստանաք այն, ինչի մասին ես խոսում եմ: Այնուհետև գնա՛ մի տեղ, որտեղ բոլորը սիրում են քեզ, այդ ջերմ զգացողությունը, որ պարզապես, օ՜հ, դու հավերժ կարող էիր մնալ այնտեղ, տեսնում եք: Ահա թե ինչ է դա, հասկանում եք, դա հոգի է: Իսկ մարդիկ չգիտեն, թե ինչ է դա, նրանք զարմանում են, թե մարդիկ ինչու են այդպես ապականված:

149 Ի՞նչն է ստիպում լավ կանանց, ի՞նչն է ստիպում լավ կանանց հագնել այդ անպարկեշտ հագուստները և դուրս գալ այնտեղ: Ի՞նչն է ստիպում, նույնիսկ հիմա, երբ դեռ ցուրտ է, այդ փոքրիկ տասնվեց տարեկան աղջիկներին, այդ հագուստով, որը նա չպիտի հագնի նույնիսկ իր մայրիկի առաջ, փողոց դուրս գալ: Որովհետև ոչ թե այդ երեխան (այդ երեխան չգիտի էլ, թե որն է լավ), այլ որովհետև ինչ-որ քարոզիչ, ամբիոնի հետևում թերացել է իր դիրքում: Դա միանգամայն ճիշտ է: Անկասկած: Կանայք փողոց են դուրս գալիս, և բոլորն էլ սեքսուալ հագնված և նման բաներ, և մեղավորները նայում են նրանց վրա, և նրանք չգիտեն, որ իրականում նույնքան մեղավոր են, որքան եթե այդ մարդու հետ շնացած լինեին: Հիսուսն է այդպես ասում: Հիսուսն ասաց. «Ով մի կնոջ նայի նրան ցանկանալու համար, արդեն շնություն է արել նրա հետ իր սրտում, և դատաստանի օրը պատասխան է տալու դրա համար»: Նեղ է այն դուռը և նեղվածք է այն ճամփան:

150 Ես գիտեմ, դուք կարծում եք, թե ես կոպիտ մարդ եմ: Ես կոպիտ չեմ: Ես ձեր եղբայրն եմ և սիրում եմ ձեզ:

151 Փաղե՛ք եկող բարկությունից: Գնացե՛ք խաչի մոտ և լացե՛ք, մինչև որ ձեր սիրտը լցվի Նրա Հոգով, դա ձեզ շուռ կտա աշխարհի բոլոր բաներից, և բարեպաշտ կքայլեք Նրա առջև, Նրա համար վառվող սրտով: Մեր:

Ոչ թե պարտք։ Քրիստոսին ծառայելը պարտականություն չէ, Քրիստոսին ծառայելը՝ սերն է, որ ծառայում է Քրիստոսին։ Այն գույն է տալիս, ուղղում է քեզ, մինչ որ քո կյանքի ամեն զարկը բաբախի Նրա հետ։ Ահա, թե երբ ես դու տեսնում մեղքը։

152 Նա լաց եղավ երկրի վրա։ Նոյի օրերում դա վշտացրեց Աստծուն, երբ Նա տեսավ մարդկանց սրտերը։ Հիսուսը նստեց լեռան վրա և ասաց. «Երուսաղե՛մ, Երուսաղե՛մ, քանի՞ անգամ կամեցա քեզ հավաքել, բայց քո ժամը հասել է և ձեր տունը ավերակ է թողնվում»։

153 Այդպես էլ Մարդու Որդու գալստյան ժամանակ կլինի, իսկական, ճշմարիտ հավատացյալիների սրտերը կոտրված են։ Նա այս պահին տեսնում է, որ այս երկրում պիտի արթնություն լիներ։ Ինչպե՞ս դա կարող է լինել մի խումբ ապօրենիների միջոցով։ Ինչպե՞ս դա կարող է լինել, երբ նրանք սկզբից էլ դատապարտված են եղել։

154 Աստծո թագավորությունը նման է մի մարդու, ով ուռկանը գցեց ծովը, և, երբ այն հանեց, այնտեղ կային կրիաներ, սողուններ, օձեր, գորտեր և մի քանի ձկներ։ Նա չէր որոշում, թե որը, նա պարզապես նետեց դա ափ։ Ահա թե ինչ է անում Ավետարանը։ Ահա թե ինչ են անում Բիլլի Գրեհեմը, Օրալ Ռոբերտսը, ես ինքս և ուրիշ այլ քարոզիչները, ովքեր քարոզում են Ավետարանը, ուռկանը գցում, հանում են. «Ահա նրանք, Տե՛ր»։ Բայց ի՞նչ ենք մենք անում ամեն անգամ։ Տեսնում ենք, որ նախքան քո կրկին վերադառնալը, նրանք նորից վերադարձել են լճի մեջ։ Ի՞նչ է սա։ Նա սկզբից ի վեր կրիա է եղել։ Ավետարանի ուռկանի մեջ հայտնվելը չփոխեց նրան։ Նա սկզբից ի վեր կրիա է եղել։ Նա սկզբից ի վեր սողուն է եղել։ Նա սկզբից ի վեր օձ է եղել։ Նա կեղծավոր է եղել, նախքան եկեղեցի գալը։ Նա նույնիսկ ցանկություն չի ունեցել դադարել խմել, քարտ խաղալ, ծխել, ստել և գողություն անել։ Նա պարզապես եկել էր, որովհետև վախենում էր դժոխքից։ Այդպես անելով՝ դուք ձեզ ավելի շատ եք դժոխքի թեկնածու դարձնում։ Դա ճշմարտություն է։ «Նեղ է այն դուռը և նեղվածք է այն ճամփան, և քչերն են, որ գտնում են այն»։

Աղոթենք։

155 Տե՛ր, ո՛հ, քննի՛ր ինձ, Տեր։ Փորձի՛ր իմ գորձը հիմա, Տե՛ր։ Թույլ մի՛ տուր, որ կանգնեմ Քո դատաստանի առջև այսպես քարոզելուց հետո։ Ո՛հ, եթե կա իմ մեջ անմաքուր մի բան, Տե՛ր, խնդրում եմ, հանի՛ր դա։ Մենք տեսնում ենք այն օրը, որում ապրում ենք, երբ տղամարդիկ և

կանայք այդքան խստապարանոց են դառնում: Նրանք ամաչում են: Մի անգամ Դու ասացիր. «Սիոնի դստերերի մեջ նույնիսկ պատկառելություն չկա»: Նրանք այնքան են կորցրել պարկեշտությունը, որ այլևս նույնիսկ չեն կարմրում: Ո՛վ Տեր, մտածե՛ք այդ մասին: Եվ իմացեք, որ ժամացույցն աշխատում է, ևս մեկ կամ երկու րոպե, և մեծ կործանումը վրա կհասնի, այդժամ նա, ով անմաքուր է, թող այլևս անմաքուր մնա:

156 Ո՛վ Աստվա՛ծ, արթնացրո՛ւ մեզ այս առավոտ: Թափ տո՛ւր մեզ, Տե՛ր: Մենք տեսնում ենք նշանների հայտնվելը: Մեր աչքերը բաց են դա իմանալու համար: Մենք տեսնում ենք միլիոնավոր, միլիոնավոր մարդկանց, ովքեր մերժում և հեռանում են: Ես ուզում եմ իմանալ, թե ես ի՞նչ կարող եմ անել, ես ի՞նչ կարող եմ անել, ո՛վ Տեր: Արդյոք կա՞ մի բան, Տեր: Եթե ավելի շատ քարոզչություն, ավելի շատ աղոթք, ավելի շատ ինչ–որ բան է հարկավոր, օգնի՛ր ինձ, Տե՛ր, որ կարողանամ Պատգամը բերել մարդկանց: Ես ի՞նչ կարող եմ անել: Նրանք անընդհատ մերժում են Դա: Դու կատարում ես Քո մեծ նշաններն ու հրաշքները, մինչդեռ մարդիկ առաջ են ընթանում: Թե դա Քո Գրվածքը պետք է կատարվի՞, ժամանակն է, երբ. «Ոչ մեկը չի կարող Ինձ գալ, եթե Իմ Հայրը նրան չձգի, և բոլորը, ում Հայրն Ինձ է տվել, Ինձ պիտի գան»: Տե՛ր Աստված, տո՛ւր, որ այս առավոտ մարդիկ արթնանան և տեսնեն այս երկրի վերջին նշանը: Խնդրում եմ, Տե՛ր, որ Դու մի բան շնորհես այս մարդկանց:

157 Օրհնի՛ր այստեղ գտնվողներին այս առավոտ: Ո՛վ Աստվա՛ծ, սկսի՛ր Նեվիլ եղբորից, Տե՛ր: Բժշկի՛ր նրա մարմինը: Նա այսօր հիվանդ է, Տեր, ստամոքսի խանգարում ունի: Ես խնդրում եմ, որ Քո բժշկարար ձեռքը նրա վրա լինի: Գրգռի՛ր նրա հոգին:

158 Ո՛վ Աստված, անցիր այս ժողովքով: Այստեղ տղամարդիկ և կանայք են նստած, որոնց կարող է այլևս չտեսնեմ, մինչև դատաստանի այն օրը, այդ ժամանակ ես հաշիվ եմ տալու: Բայց ես կարդացել եմ Քո Խոսքը. «Նեղ է այն դուռը և նեղվածք է այն ճամփան, և քչերն են, որ գտնում են այն»: Ո՛վ Տեր, թող այդ «քչերը» լինեն նրացից ոմանք, կանե՞ս դա, Տեր: Շնորհի՛ր դա յուրաքանչյուրին, որ գտնվում է այստեղ:

159 Խնդրում եմ այնպես, ինչպես միայն մարդը կարող է խնդրել: Տե՛ր, այս մարդիկ ամեն ինչ արել են ինձ օգնելու համար: Եթե ես սոված եմ եղել, նրանք կերակրել են

ինձ։ Եթե կոստյումի կարիք եմ ունեցել, գնել են։ Նրանք միասին գնացել և մեքենա են գնել ինձ համար, որպեսզի քարոզեմ Ավետարանը։ Նրանք ամեն ինչ արել են այդ ուղղությամբ։ Ո՜հ Հայր, քննի՛ր նրանց հոգիներն այս առավոտ, խնդրում եմ, արա՛ դա, և թող նրանք քննեն դա Քո առջև։ Ես չգիտեմ, ես հավատում եմ, որ նրանցից յուրաքանչյուրը այդ Ընտրվածի մեջ է։ Ինձ էլ դիր այնտեղ, Տե՛ր։ Եվ եթե կա իմ մեջ մի պատճառ, որի հետևանքով ես չեմ լինելու այնտեղ, Տե՛ր, հայտնի՛ր դա ինձ, ես հենց հիմա կշտկեմ դա։ Ես ուզում եմ վստահ լինել, Տե՛ր, որ այն առավոտ ոչ մի անախորժություն չի լինելու գետի մոտ։ Ես ուզում եմ մտնել այն օրը։ Ես չգիտեմ, թե դա երբ է լինելու, դա կարող է լինել նույնիսկ այսօր։ Ուստի օգնի՛ր ինձ, որ իմանամ, օգնի՛ր այս մարդկանց, որ իմանան։

160 Եվ երբ մենք տեսնում ենք մեր սրտերի անհոգությունը։ Ո՜հ, մենք բավականություն ենք ստանում լավ Պատգամից, երբ լսում ենք ռադիոյով կամ գնում ենք եկեղեցի։ Մենք լավ Պատգամը գնահատում ենք։ Ինչ-որ վայրերում մենք դեմ չենք խոսել Հիսուսի մասին։ Բայց, Տեր, արդյո՞ք մեղքն այնքան է ճնշում մեզ, որ արցունքներ է առաջացնում մեր աչքերի մեջ, հեծում ու ողբում ենք և կանգնում ենք դրա դեմ և ամեն պղծությունների դեմ, որոնք կատարվում են այս քաղաքում։ Տե՛ր, թող Աստծո Հրեշտակը տեսնի դա մեր վրա և նշան դնի մեր վրա։ Շնորհի՛ր դա, Տեր։

161 Այո, Տե՛ր Հիսուս, ե՛կ հիմա և պատրաստիր մեր սրտերը և տուր մեզ Քո իսկական նշանները, որ Դու մեր մեջ ես, որպեսզի մենք կարողանանք իմանալ, որ մենք ստանում ենք, ստանում ենք վերջին նշանը այս սերնդի վերջանալուց առաջ։

162 Մենք տեսնում ենք ապօրինությունը, երբ տղամարդն ապրելով այս ազգի մեջ ունենում է երեխաներ ուրիշ տղամարդու կնոջից, և, և փոքրիկ աղջիկները փողոցում, և ամեն տարի հարյուրավորները դպրոցից դուրս են գալիս և դեռահաս աղջիկները մայրանում են, հարգանք չկա, և, թե ինչպես են կանայք իրենց թունավորում, ծխելով և, և խմելով, և հերուստատեսությունը և այլն ապականում են երեխաների մտքերը։ Ո՛վ Տեր, դեռ ինչքա՞ն սա կարող է շարունակվել։ Եվ Դու, Սո՛ւրբ Աստված։

163 Ո՜հ Հայր, ես, ես տարօրինակ կերպով զգում եմ այսօր, որ արագ ինչ-որ բան պետք է արվի, Տեր։ Ես չգիտեմ՝

ինչ ասել, բայց ես խնդրում եմ, Տեր, որ Դու դնես մեր սրտերում, թե ինչ անել: Ծնորհի՛ր այս բաները, Տե՛ր: Մենք դրանք խնդրում ենք Հիսուսի Անունով: Ամեն:

164 Ժամը մոտ է: Ցանկացած ողջամիտ դատողություն ունեցող մարդ գիտի, որ ինչ-որ բան է կատարվելու: Այս շենքում չկա մի մարդ, ով առողջ բանականություն ունի, որ չիմանա, որ այս աշխարհը չի կարող մնալ այս վիճակում:

Մենք չենք կարող մնալ, բարեկամնե՛ր: Ոչ մի բան, որպես ձեր հովիվ և եղբայր, ոչ մի տեղ չկա, ուր ես կարողանամ ձեզ առաջնորդել այս առավոտ բացի Հիսուս Քրիստոսից: Ես ոչ մի տեղ չգիտեմ: Պարզապես մտացե՛ք այն մարգարեությունների մասին, որոնք պետք է կատարվեն հափշտակությունից առաջ, այն ամենը, ինչ ես գիտեմ դրա մասին արդեն կատարվել է:

165 Դուք կհարցնեք. «Իսկ ի՞նչ կասեք Գազանի դրոշմի մասին»: Դա լինելու է նեղության ժամանակ: Այդ ժամանակ եկեղեցին արդեն չի լինի: Սրանց վրա նշան դնելու կարիք չի լինի, նրանք հապշտակված են լինելու, հասկանում եք: Նշանը հիմա է դրվում: Դրոշմումը ցուցանիշ է, նշան է: Վազե՛ք Աստծո մոտ, արագ վազե՛ք Նրա մոտ:

166 Ես զարմանում եմ այս առավոտ, մինչ սպասում ենք մի րոպե: Ես ինձ զգում եմ այնպես, ինչպես դուք: Ես, ես զգում եմ ձեր զգացումները, ձեզանից ամեն մեկը փորձում է մտածել. «Ո՛վ Աստված, քննի՛ր ինձ»: Ես էլ եմ այդպես զգում: Ես գիտակցում եմ, որ այսպիսի Պատգամները, բարեկա՛մ, ժողովրդականություն չեն վայելում մարդկանց շրջանում: Դու մեղադրում ես նրանց և դու մեղ…դու, դու պարզապես ցածրացնում ես նրանց: Ինչ-որ մեկը պետք է անի դա: Ես կուզենայի, որ, գուցե, ուրիշը լիներ: Բայց եթե ինձ է բաժին ընկել անել դա, եթե ես պիտի հավաքարար լինեմ, ես կմաքրեմ: Եթե ես… Դավիթն ասում է. «Ես նախընտրում եմ իմ Աստծո Տանը դռնապան լինել, քան վրաններում բնալվել մեղքի հետ»: Դա ճիշտ է: Ինչ Աստված կամենում է, որ դուք անեք, արե՛ք դա: Մի՛ ամաչեք: Եթե այնտեղ…

167 Եվ մի մոռացե՛ք, ես գիտեմ, որ դա շատ կարևոր է: Կասեք. «Եղբայր Բրանհամ, դու ասում ես, որ միայն ութ հոգի է փրկվելո՞ւ»:

168 Ես չգիտեմ, թե քանիսն են փրկվելու, ես ձեզ չեմ

կարող ասել։ Բայց մի բան կասեմ՝ նրանք այնքան քիչ կլինեն այսօրվա նման մի օր։ Միայն մտածեք, այն օրը, երբ Նա այնտեղ էր, քանի՞ հոգի փրկվեց։ Մտածե՛ք Նոյի օրերի մասին և Ղովտի, Ղովտի օրերի մասին, և բոլոր նրանց մասին, Նա ասաց. «Այնպես էլ կլինի Մարդու Որդու գալստյան ժամանակ, որովհետև նեղ է այն դուռը և նեղվածք է այն ճամփան»։ Տեսնում եք, դուք ինքներդ եք Նրա հետ ներս մտնում, և վերջ։ Հասկանո՞ւմ եք։ «Եվ քչերն են, որ կգտնեն այն»։ Քանի՞սն են հավատում, որ սա Ավետարանի Ճշմարտությունն է։ Հիսուս Քրիստոսն է այդպես ասել. «Քչերն են, որ կգտնեն այն»։ Ընդամենը մի քանիսը։ Եղե՛ք այդ քչերից մեկը։ Գիտեմ՝ դա ծանր է, դա դժվար է։ Եվ դա դժվար է ինձ համար ասել, մարդկային սեր զգալով ձեր հանդեպ, բայց Աստծո սերը ստիպում է ինձ ձեզ ասել։

169 Հիմա, նույն Սուրբ Հոգին, որ Աբրահամի ժամանակ կատարեց, Քրիստոսի ժամանակ կատարեց, խոստացել է լինել այստեղ նույն բանն անելու համար։ Նա այստեղ է։ Եթե ես ձեզ Ճշմարտությունն եմ ասել, ուրեմն Աստված պարտավոր է հաստատել այդ Ճշմարտությունը։

170 Եթե ես իմ խոսքը չեմ պահում, որեմն ես իմ խոսքի տերը չեմ։ Եթե դուք չեք պահում ձեր խոսքը, ուրեմն դուք ձեր խոսքի տերը չեք։ Գուցե ես ինչ-որ բան եմ քեզ խոստացել և չեմ կարողացել դա անել, բայց, բայց ես կգամ, կասեմ ձեզ այդ մասին։ Եթե ես ինչ-որ բան եմ քեզ պարտք և թաքնվում եմ քեզանից, ուրեմն ես կեղծավոր եմ։ Եթե ես գամ քեզ ասեմ. «Ես քեզ պարտք եմ, բայց չեմ կարողանում պարտքս վերադարձնել, բայց ես հնարավոր ամեն բան կանեմ, որ վճառեմ», այդ դեպքում դու կներես և կօգնես ինձ։ Տեսնո՞ւմ եք։

171 Մենք բոլորս ինչ-որ բան Աստծուն պատրք ենք։ Մենք Նրան մեր կյանքերով ենք պարտական։ Եկե՛ք ազնիվ լինենք այս հարցում։ Դուրս են գալիս և ասում են...Մի՛ ասեք. «Դե, լսի՛ր, ես, ես երիցական եմ։ Ես մեթոդական եմ։ Ես հոգեգալստական եմ։ Ես Աստծո Եկեղեցուց եմ։ Ես ուխտավոր եմ։ Ես սրբության ուխտավոր եմ»։ Մի՛ մտածեք այսպես։ Նրանցից միլիոնավորները կլինեն դժոխքում։ Եղե՛ք քրիստոնյա, Քրիստոսի մեջ։

172 Քանի՞սը կասեն. «Եղբա՛յր Բրահնամ հիշի՛ր ինձ աղոթքի մեջ հիմա, ես ուզում եմ բարձրանալ»։ Աստված օրհնի ձեզ։

173 Տե՛ր, Դու տեսնում ես նրանց ձեռքերը: Հիմա է ժամը, զորավոր Սուրբ Հոգին հանդարտեցրել է այս շենքն այս առավոտ: Ես զգում եմ Քո ներկայությունը: Ես գիտակցում եմ, որ Դու այստեղ ես, որ պատվես Քո Խոսքը. «Տե՛ր, ես տնկել եմ, և զօր ու գիշեր կջրեմ այն, ոչ ոք Իմ ձեռքից չի հափշտակի դա»: Դու ուղարկել ես Քո Խոսքը որոշակի նպատակի իրականացման համար, և Այն, Այն պետք է իրականացնի դա, Տե՛ր: Աստվածաշունչն ասում է, որ Դու նույնն ես երեկ, այսօր և հավիտյան:

174 Նրանք չկարողացան հավատալ, Քո օրերում ապրող մարդիկ չկարողացան հավատալ, որ Սուրբ Հոգին Քո մեջ էր: Եվ Դու (մարդ լինելով) Ինքդ քեզ Աստված էիր դարձնում, որը, Դու կույսից ծնված Աստծո Որդի էիր, որ եկավ երկիր, որպեսզի մեզ փրկագներ մեր մեղքերից: Եվ քանի որ նրանք տեսան Աստծո Հոգին Քո մեջ, նրանք փորձում էին այլ կերպ գործել: Եվ Դու նրանց ասացիր, Տեր. «Ես չեմ անում այդ գործերը, այլ Իմ Հայրը, որ բնակվում է Իմ մեջ, Նա է անում գործերը: Եթե դուք Աբրահամին ձեր «հայրն եք» անվանում, Աբրահամը տեսավ Իմ օրը»: Իհարկե, նա տեսավ այն, երբ կանգած էր Նրա կողքին, տեսավ Նրան այդ գործերն ու նշանն անելիս: «Նա տեսաց Իմ օրը և ուրախացավ»: Ասաց. «Դուք սխալվում եք, որովհետև ո՛չ Գրքերը գիտեք, ո՛չ էլ՝ Աստծո զորությունը, թե Աստված ինչպես կարող էր կույսին հովանի լինել, և ծնել մի Որդի (կուսածնությամբ) և Ինքն Իր զորության լիությամբ բնակվել այդ մի Մարդու մեջ»:

175 Եվ թե ինչպես Նա կարողացավ այդ Մարմնից վերցնել այդ նույն Արյունը, որը Նա ընծայեց որպես Զոհ և սրբացրեց մարդկանց, որպեսզի Ինքը կարողանա բնակվել նրանց մեջ, շարունակել Իր գործը մինչև ավարտին հասցնելը: Ո՛վ Աստված, արթնացրո՛ւ մարդկանց, որ տեսնեն դա: Ծնորհի՛ր դա: Փրկի՛ր ամեն մարդու, ով բարձրացրել է իր ձեռքերը: Մաքրի՛ր նրանց սրտերը: Տե՛ր, ես էլ եմ ձեռքերս բարձրացրել: Մաքրի՛ր ինձ, ո՛վ Տեր: Սա ուղղիչ տուն է: Սա մի վայր է, որտեղ մենք պետք է լվացվենք: Թո՛ղ Սուրբ Հոգին լվա մեզ այսօր, և մաքրի մեզ մեր ապականությունից:

176 Մենք խնդրում ենք, Տե՛ր, որ ամեն մարդ, որ դուրս կգա այստեղից լցվի Քո Հոգով: Գուցե արտաքնապես ոչ մի էմոցիաներ չլինեն, երբ դա տեղի ունենա: Բայց, Տե՛ր, ներս մտի՛ր, հանի՛ր պատնյանը և ցո՛ւյց տուր մեզ, թե ով ենք

մենք, Տե՛ր։ Շնորհի՛ր դա։ Իսկ հետո լցրո՛ւ մեզ Քո Հոգով և ճշմարիտ և մաքուր սրտով։ Եվ այս հալածանքների և դժվար փորձությունների ժամանակ, Դու ավելի քաղծր և սիրելի կդառնաս մեզ համար, մինչ քայլում ենք այս երկրի վրա, սպասելով այն օրվան։ Մինչ արցունքները հոսում են մեր այտերից այս քաղաքի մեղքերի պատճառով, թող Սուրբ Հոգին նայի ցած և ասի. «Կա մեկը, որի վրա Ես կարող եմ նշան դնել, նա Իմն է, նա Իմն է»։ Շնորհի՛ր դա, Տեր։ Թող դա լինի մեր մեջ այսօր։ Մենք այդ խնդրում ենք Հիսուսի Անունով։ Ամեն։

Երբ օրվա ավարտին ես մոտենամ գետին,
Եվ տառապանքի վերջին քամիները փչած լինեն,
Այնտեղ ինձ սպասող Մեկը կլինի, որ ցույց տա ինձ ճամփան,
Ես Հորդանանը մենակ չեմ անցնի։

Ես Հորդանանը մենակ չեմ անցնի,
Հիսուսը մեռավ, բոլոր իմ մեղքերը փրկագնված են։
Երբ բախվեմ խավարին, Նա ինձ սպասելիս կլինի,
Ես Հորդանանը մենակ չեմ անցնի։

177 Ես հիմա ուզում եմ Նրան ճանաչել։ Բռնիր իմ ձեռքից, թանկագին Տեր, առաջնորդիր ինձ, թույլ տուր ինձ կանգնել։ Տե՛ր, թույլ տուր ինձ կանգնել այստեղ այն ամենի դեմ, որ սխալ է կոչվում, այն ամենի դեմ, որ սխալ է թվում։ Ինձ չի հետաքրքրում, թե որևէ մեկը ինչ է ասում, թույլ տուր ինձ կանգնել, Տեր։ Երբ ես արել եմ այն ամենը, ինչ կարող եմ անել, օգնի՛ր ինձ կանգնել։ Բռնիր իմ ձեռքից և անցկացրու դրա միջով, Տե՛ր։ Մի բա՛ն արա, տո՛ւր ինձ կանգուն մնալ։ Երբ այս բաները գան, և այս աշխարհի գանձերը և ողջ շքեղությունը և նրա փառքը, կուրացրո՛ւ իմ աչքերը դրանց հանդեպ, թող միայն Նրան տեսնեմ, Ով մեռավ ինձ համար։ Եթե դա ինձ արժենա իմ ունեցած ամեն ընկերոջը, եթե դա ինձ արժենա այն ամենը, ինչ ես ունեմ, դա ոչինչ չի նշանակում, ես այդ ամենը դնում եմ Քո զոհասեղանի վրա։ Ահա, տո՛ւր ինձ հավատարիմ կանգնել։ Եվ մի օր, երբ վերջին շունչս փչեմ, և իմանամ, որ իմ սիրտը կանգնում է, իմ օրերն ավարտվել են, իմ ժամանակը լրացել է և իմ կյանքի քարտը լցվել է, ես ուզում եմ իմանալ, որ Հորդանանը մենակ չեմ անցնի։ Նա այնտեղ կլինի։ Այո։ Երբ բախվեմ խավարին, Նա Ինձ այնտեղ

սպասելիս կլինի, ես Հորդանանը մենակ չեմ անցնի: Եթե ես հիմա կանգնեմ Նրան համար, այն ժամանակ էլ Նա կկանգնի ինձ համար: Ես կապրեմ Նրան համար, Ով մեռավ Իմ փոխարեն, այդ ժամանակ ինչքան ուրախ կլինի իմ կյանքը: Այսպես եմ ես ուզում կանգնել:

178 Ենթադրում եմ, որ այստեղ հիվանդ մարդիկ կան: Նա աղոթքի քարտեր բաժանե՞լ է: Ես մոռացել էի: Աղոթքի քարտեր բաժանվե՞լ են: Որևէ քարտեր բաժանվե՞լ են: Որևէ մեկը աղոթքի քարտ ունի՞: Ոչ:

179 Ես պարզապես սպասում եմ Սուրբ Հոգուն: Եթե դուք միայն հավատաք, պարզապես հավատացե՛ք, մի՛ կասկածեք: Եթե Աստված ինձ հայտնի, ձեր խնդիրները... Ինչ էլ որ դա լինի, ես չգիտեմ. եթե բարձրացնեք ձեր ձեռքը, դուք չեք ճանաչում ինձ, ես էլ ձեզ: Այդ դեպքում, եթե Աստված հայտնի այստեղ, կհավատա՞ք, որ Դա նույն Հրեշտակն էր, որ բերեց Պատգամն անմիջապես կործանումից առաջ, որ դա նույն Հրեշտակն է, որ բերեց դա հիմա մեկ այլ կործանումից առաջ: Կհավատա՞ք դրան: Եթե կհավատաք, ուրեմն բարձրացրեք ձեր ձեռքերը: Լավ: Լավ, թող Տերը շնորհի դա:

180 Նա նստած է ինձանից ոչ հեռու: Մի մարդ էլ կա, որ նստած է ինձանից ոչ հեռու, դա տիկին Սնայդերն է, կամ ահա տիկին Մուրֆին, կամ այս կինը, որ նստած է այստեղ: Ես ճանաչում եմ նրանց:

181 Ես չեմ ճանաչում այս մարդուն, նա ինձ անծանոթ է: Բայց Աստված ճանաչում է նրան: Հիմա եթե Աստված դա հայտնի, ձեզանից քանի՞սը կհասկանան, որ դա չ...

182 Մի՛ նայեք ինձ: Ես Քենթուքիի մի գյուղացի եմ, ինչ վերաբերում է դրան: Ես, ես նույնիսկ բավարար կրթություն չունեմ, հազիվ, որ իմ անունը գրեմ: Բայց մի բան կա, որ ես գիտեմ, Ես ճանաչում եմ Նրան: Եվ դա, դա, դա է այն ամենը, ինչ ինձ պետք է իմանալ: Ուշադրություն մի, մի դարձրեք իմ քերականությանը:

183 Դուք նաև կարող եք մտածել, որ իմ այսօրվա քարոզը գծերից դուրս էր և այլն, մի անգամ համեմատեք դա Աստվածաշնչի հետ և տե՛ս, արդյո՞ք դու թիրախին չես կպնում: Տե՛ս արդյո՞ք դու թիրախին չես կպնում, երբ, երբ դնում ես դա այնտեղ: Մի՛ համեմատեք դա ձեր սեփական մտքերի հետ, այլ համեմատեք Նրա ասածների հետ: *«Նեղ է այդ դուռը և նեղվածք է այն ճամփան, և քչերն են, որ գտնում են այն, որովհետև լայն է այն դուռը և ընդարձակ*

այն ճամփան, որ դեպի կորուստ է տանում, և շատ են նրանք, որ մտնում են դրանով», միլիոնները մտնելու են դրանով: Հավանաբար միլիոնից մեկը ճիշտ ուղու վրա լինի: Ահա, խնդրեմ: Ահա թե ինչ է Նա ասել: Հիսուսն երբեք այդ թիվը չի տվել, այլ Նա ասել է. «Ինչպես Նոյի օրերում, ութ հոգի էին, ինչպես Սոդոմի օրերում երեք հոգի էին»: Այդ ամենից երեքը փրկվեցին կրակից: Այ այդպես կլինի:

184 Եվ այսպես, եթե որևէ մեկը իրոք հոգևոր է, ես ուզում եմ, որ դուք նայեք այս մարդուն, որ այստեղ նստած է, նա անընդհատ հետեևում է ինձ: Բարձրացրել է իր ձեռքը, ես նրան չեմ ճանաչում, երբեք չեմ տեսել, և ես ոչինչ չգիտեմ նրան մասին: Նա պարզապես նստած է այնտեղ և նայում է ինձ: Բայց, հասկանում եք, նա կապ է հաստանում, աղոթում է: Դա ճիշտ է: Հիմա եթե Տերը ինձ ասի…Այդ մարդը նստած է ինձանից հեռու է, և սա մեր առաջին հանդիպումն է, և ահա նա նստած է այնտեղ: Եթե Տերն ինձ հայտնի, թե ինչ է նրա, թե ինչ է նրա… Ես, ես չէի կարող նրան բժշկել: Ես չեմ, ես չէի կարող դա անել, որովհետև Աստված արդեն այդ արել է: Բայց դա կբարձրացնի ձեր հավատքը: Բոլորը հիմա տեսնում են, որ Նա այստեղ է, հենց նույն Հոգին է: Եվ հիշե՛ք, որ Հիսուսն է սա խոստացել, նախքան ժամանակի ավարտը: Դա միշտ եղել է վերջին նշանը:

185 Մի օր Լեոն և ես փողոցում նստած էինք և մեզանից մեկը խոսում էր: Եվ ես շարունակ զգում էի, որ ինչ-որ մի փոփոխություն կլինի, փոփոխություն է տեղի ունենալու: Երբ մենք խոսում էինք դրա մասին, իմ ծառայության մեջ չի լինելու փոփոխություն, որովհետև այլևս ոչինի լինել չի կարող, այլ իմ մեջ է լինելու փոփոխություն: Ես միշտ թույլիկ եմ եղել, և թույլ եմ տվել մարդկանց ուղորդել և առաջնորդել ինձ, և *այստեղ* և *այնտեղ* ուղարկել: Եթե ես տարիներ առաջ արած լինեի մի բան, որը Տերն էր ինձ պատվիրել անել, ես չէի հայտնվի այն խնդիրների մեջ, որում գտնվում եմ այսօր: Հաջորդ շաբաթ ես մեկնելու եմ, որ մենակ մնամ Աստծո հետ: Այո՛, պարոն: Ես, ես պետք է Երկնքից լսեմ: Ես չեմ ուզում թույլիկ լինել, ես ուզում եմ իմ սեփական համոզմունքների վրա կանգնել:

186 Այդ մարդը, Դա շարունակում է մոտենալ նրան, նա նստած է այնտեղ՝ հետևում, որովհետև այդ մարդը հավատում է, նա իրականում հավատում է: Ես ամեն կողմց հետևում եմ լսարանին, և Այն իջնում է ուղիղ այնտեղից՝ հետևից այդ մարդու վրա: Նա կարիք ունի,

ծանրաբեռնված է, բայց նա ծանրաբեռնված է մեկ ուրիշի համար: Դա ճիշտ է: Դուք ուրիշի համար եք աղոթում: Ձեր սրտում մեկ ուրիշ մարդ է: Ճիշտ է, չէ՞: Ընկեր է: Եթե ես ձեզ ասեմ, թե ինչ է պատահել այդ ընկերոջ հետ, կհավատա՞ք, որ Աստծո ծառան եմ: Նա հարբեցող է: Դա ճիշտ է: Եթե դա ճիշտ է, բարձրացրեք ձեր ձեռքը:

187 Դուք հավատո՞ւմ եք: Ինչ-որ մեկն այնտեղ բարձրացրել է իր ձեռքերը, ինչ-որ մի կին այնտեղ՝ հետևում: Այո: Այո: Դուք ինձ չե՞ք ճանաչում: Արդյո՞ք ես ձեզ բոլորիդ անծանոթ եմ: Ես ձեզ չեմ ճանաչում, բայց Աստված ձեզ ճանաչում է: Հավատո՞ւմ եք դրան: Եթե Աստված ինձ հայտնի, թե ինչ կա ձեր սրտում կհավատա՞ք, որ Նրա ծառան եմ: Տիկին, այն, ինչի համար դուք անհանգստանում եք, դա այդ երեխան է այնտեղ: Դա ճիշտ է: Եվ այդ երեխայի դեմքի վրա էկզեմա կա: Բժիշները ոչինչ չեն կարող անել դրա հետ: Դուք այստեղ օտար եք, դուք և այնտեղ նստած ձեր սիրելին: Հավատո՞ւմ եք, որ Աստված ինձ կարող է ասել, թե ով եք դուք կամ որտեղից եք: Հավատո՞ւմ եք դրան: Կընդունե՞ք երեխայի բժշկությունը, եթե Նա հայտնի դա: [Տիկինը պատասխանում է. «Այո: Ծան. Խմբ.]: Լավ, կարող եք վերադառնալ Սոմերսեթ, Քենթուքի, որտեղից, որ եք: Եվ հավատացե՛ք, որ նա կբժշկվի, էկզեման կհեռանա երեխայից, եթե կարողանաք հավատալ դրան:

188 Երբ ես նշեցի այդ Խոսքը. ինչ-որ մեկը կանգնած է այնտեղ սրահի խորքում, Սոմերսեթից է, Քենթուկիից, աղոթում է, սրտի հիվանդություն ունի: Հավատո՞ւմ եք, որ Աստված կարող է կբժշկել սրտի հիվանդությունները: Եթե ձեր ողջ սրտով եք հավատում, և հավատում եք, որ Աստված կարող է կբժշկել և առողջացնել:

189 Ահա, ահա, այստեղ կարծեմ այստեղ ինչ-որ մեկը՝ մի տիկին բարձրացրել էր ձեռքը: Այո՛, ես տեսա ձեր ձեռք: Ես ձեզ անծանո՞թ եմ, տիկին: Ես ձեզ չեմ ճանաչում: Մենք երբեք չենք հանդիպել: Դուք հավատո՞ւմ եք, որ ես Նրա ծառան եմ: [Տիկինը պատասխանում է. «Այո»: Ծան. Խմբ.]: Հավատո՞ւմ եք Դուք ձեր սրտում բեռ ունեք կամ ինչ-որ բան: Դուք կհավատա՞ք, եթե Աստված ինձ հայտնի դա, կհավատա՞ք, որ դա նույն Հոգին է, որ Քրիստոսի մեջ էր: Ձեր ամուսինը նստած է այնտեղ, նա էլ է հավատո՞ւմ դրան: Դուք կհավատա՞ք դրան: Դա ձեր կողքին նստած աղջկա վերաբերյալ է: Դա ճիշտ է, Նա քաղցկեղ ունի: Բայց դուք հավատո՞ւմ եք, որ Աստված կբժշկի նրան: Եթե

հավատում եք, բարձրացրե՛ք ձեր ձեռքը։ Լավ, դրեք ձեր ձեռքերը այդ երեխայի վրա։

190 Տեր Հիսուս, Քո Հոգու նեկայության մեջ, ես դատապարտում եմ սատանային, ով փորձում է սպանել այդ երեխային։ Ես հավատքով դնում եմ Հիսուս Քրիստոսի Արյունը մարդասպանի և այդ երեխայի միջև։ Թող նա ապրի։ Ամեն։

191 Հավատացե՛ք Աստծուն։ Մի՛ կասկածեք։ «Եթե կարողանաք հավատալ, ամեն բան հնարավոր է»։ Եթե կարողանաք հավատալ, ամեն բան հնարավոր է։ Ճիշտ է։

192 Էլի ինչ–որ մեկն այնտեղ՝ խորքում, բարձրացրել է իր ձեռքը, ինչ–որ տեղ, դուք, տիկին, որ վերջում եք։ Հավատո՞ւմ եք, որ Աստծո ծառան եմ։ Ես ձեզ չեմ ճանաչում, դուք էլ ինձ չեք ճանաչում։ Հավատո՞ւմ եք, որ Աստված կարող է ինձ հայտնել, թե ինչ խնդիր ունեք դուք։ Կընդունե՞ք Հիսուսին որպես ձեր Բժիշկ կամ Հոգ տանող, ինչ էլ, որ դա լինի, ինչ էլ, որ դա...Այդ դեպքում կհավատա՞ք դրան։ Շատ լավ, ուրեմն դուք նյարդային խանգարում եք ունեցել ահա թե ինչից էիք տառապում։ Եթե դա ճիշտ է, կանգնեք, եթե դա ճիշտ է, պարզապես մարդիկ այդպես կտեսնեն, որ դա ճշմարտություն է։ Լավ։ Հիմա դա կհեռանա ձեզանից։ Վերադարձե՛ք տուն և եղեք բժշկված։ Աստված օրհնի ձեզ։

Դուք նույնպես Քենթուկիից եք։ Ուհ–հու, դա ճիշտ է։

193 Ձեր կողքին նստած կինը նույնպես Քենթուկիից է։ Նա նույնպես։ Ես ձեզ չեմ ճանաչում, այդպես չէ՞։ Բայց ես կարող եմ ձեզ ասել, որ ինչ–որ բան կարգին չէ ձեզ հետ։ Եթե ես կարողանամ ձեզ ասել, թե ինչ խնդիր ունեք, կընդունե՞ք Քրիստոսին որպես ձեր Բժիշկ։ Դա ազդրում է։ Եթե դա այդպես է, բարձր բարձրացրեք ձեր ձեռքը, որ մարդիկ կարողանան տեսնել։ Լավ, վերադարձե՛ք տուն, այն կհեռանա ձեզանից։ Ձեր հավատը ձեզ բուժում է։

Ես ձեզ կոչ եմ անում, որ հավատաք։ Ես կոչ եմ անում ձեր հավատքին, որ հավատա։

194 Ահա այստեղ մի կին է նստած, աղոթում է, թաշկինակը պահել է իր դեմքին։ Ես չեմ ճանաչում նրան։ Աստված ձեզ ճանաչում է։ Դուք Իլինոյս նահանգի Ջոլիեթ քաղաքից եք, և դուք ուռուցք ունեք։ Դա միանգամայն ճիշտ է։ Գուցե ձեզ հետաքրքիր է...(Այո, դա, դա այն կինն է, ում Ռոզելան էր բերել։ Դա ճիշտ է։ Սպասե՛ք, նա ինձ ասել էր դրա մասին, բայց նա չգիտեր, որ ես այդ կնոջը չեմ ճանաչում։

Դա ճիշտ է: Պարզապես այդ կնոջ հավատքը մեծ է եղել): Ես ձեզ մի բան կասեմ, դուք, դուք գիտեք, որ ես դա չգիտեմ: Դուք աղոթում եք այս հիվանդ երեխայի համար, որ նստած է այստեղ աթոռի ծայրին: Դա ձեր երեխան է: Դա ճիշտ է: Ամեն: Դուք գիտեք, որ ես դա չգիտեի:

195 Ահա Նա, դա Սուրբ Հոգին է: Հավատո՞ւմ եք Դրան: Ընդունո՞ւմ եք դա: Այդ դեպքում, եթե դա ճիշտ է, ուրեմն այն, ինչ ես ասացի. «Նեղ է այն դուռը և նեղվածք է այն ճամփան»-ի վերաբերյալ, ճիշտ է: Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Որդին, հիմա այստեղ է: Կենդանի Աստծո Հոգին այստեղ է: Հավատո՞ւմ եք Դրան: Հետո, որպեսզի դուք իմանաք, որ ես մեկը չեմ, որ կարող է բժշկել, ես բժշկող չեմ, այլ Աստծո Հոգին պարզապես ընտրել է ինձ Իրեն դրսևորելու համար: Ես ոչ մի կրթություն չունեմ: Ես ոչ մի գիտելիք չունեմ: Բայց դա անողը Նրա Հոգին է, հասկանում եք, և Նա ուզում է, որ դուք իմանաք, որ ես ձեզ Ճշմարտությունն ասացի:

196 Սա է Ճշմարտությունը, որ Հիսուս Քրիստոսը ձեզանից յուրաքանչյուրին հենց հիմա առողջ է անում, եթե հավատաք դրան: Հիմա ուղղակի որպես...Եթե Դա գործել է Կինգստոնում, որտեղ միսիոներներ են եղել և ուրիշները, տեսել են, թե ինչպես է Դա գործել Կինգստոնում հազարավորների բժշկությամբ, ապա ինչո՞ւ Այն չի գործելու այստեղ՝ Ամերիկայում, այնպես, ինչպես հիմա: Ինչո՞ւ մենք չենք կարող հավատալ դրան: Որովհետև մենք չենք կարողանում հաղթահարել այդ շեմերը: Հավատո՞ւմ եք դրան: Ուրեմն, բարձրացրե՛ք ձեր ձեռքերը:

197 Հիմա այդ նույն ձեռքերը դրեք ձեր կողքին գտնվող մեկի վրա, թույլ տվեք հենց այստեղից աղոթել նրա համար, և այլևս մի՛ կասկածեք ձեր սրտում, և դա կվերջանա:

198 Ո՜հ իմ...եղբայր Նեվիլ: Ինչպե՜ս ես ցանկացա, ինչպե՜ս աղոթեցի, ինչպե՜ս ես...Գուցե դուք մտածում եք, թե ես խելքս թոցրել եմ, ես խելքս չեմ թոցրել: Ես գիտեմ, թե որտեղ եմ կանգնած: Եթե ես կարողանայի այս փոքրիկ բանը հասցնել ձեզ: Դուք գիտակցո՞ւմ եք, որ Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Որդին այս պահին այստեղ է՝ այս ժողովրդի մեջ այս առավոտ, հիմա ներկա է, ցույց տալով Իրեն:

Դե, դուք կասեք. «Բրանհամ եղբայր, *դուք* դա ասացիք»:

199 Ինչպե՞ս ես դա ասացի: Ես ձեզ չեմ ճանաչում: Այստեղ մեկ ուրիշ կին կա թոքախտով: Դուք բժշկված եք, քույր: Օրհնում եմ ձեզ: Ներողություն եմ խնդրում, դուք աղոթում եք թոքախտով տառապող մի կնոջ համար, որովհետև նա ճերմակ մազերով կին է: Այո: Լավ, հավատացե՛ք դրան: Ամեն ինչ կարգին է: Նա այստեղ է: Սա Նրա ներկայությունն է:

200 Ահա, թե ինչ ասաց Նա. *«Այս նշանները կհետևեն նրանց, ովքեր հավատում են. եթե հիվանդների վրա ձեռք դնեն, նրանք կառողջանան»:* Ինչպե՞ս Նա կարող է ստել: Տեսնում եք, դա Նրա մասին չէ, դա իմ մասին չէ, հիմա դա ձեր մասին է: Հիմա հավատո՞ւմ եք:

201 Ես այս պահին նայում եմ վերջում նստած մի կնոջ, նա մեծ հավատք ունի: Նա և իր ամուսինը վերջերս են եկել Տիրոջը: Նա նստած էր այս հավաքույթում, ճողվածք ուներ, որը բժիշկը պիտի մինչ այդ վիրահատեր, և նրան պետք է երեխա ծնվեր: Եվ բժիշկը դրանից հետո պետք է վիրահատություն կատարեր, բայց երեխան ծնվեց և նրանք այլևս ոչ մի ճողվածք չեն կարողանում գտնել: Այն ամբողջությամբ անհետացել է: Հասկանո՞ւմ եք: Ինչո՞ւ: Նա պարզապես նստած էր ինչպես…Նա երբեք չի բարձրացել այստեղ՝ հարթակի վրա: Նա պարզապես նստել է այնտեղ՝ հետևում և հավատացել է դրան: Ճի՞շտ է, տիկին Գրին: Ես կարծում եմ, որ դա այդպես է այնտեղ՝ հետևում: Դա ճիշտ է: Տեսնո՞ւմ եք նրա ձեռքը: Բժիշկն անգամ ճողվածքը չի կարողանում գտնել, այն ամբողջությամբ անհետացել է: Ինչո՞ւ: Որովհետև նա հավատացել է դրան, պարզապես քայլ է արել և ասել. «Դա ճիշտ է»:

202 Դուք էլ հիմա նույն բանն արեք, և ամեն ցավ, որ դուք ունեք ստիպված կլինի հեռանալ: Աստված, Ով կարող է, Ով կարող է Ինչ-որ բան ուղարկել մարդկային մարմնի մեջ, այդ օձի կծածի ուրվականի մեջ, որ օձն էր կծել, որ այդ մարդու ոտքի մեջ էր, թույնում էր, որ սպանի նրան, և կարող է կանգնեցնել դա և սպանել դրան հենց այնտեղ, որքան ավելին, Նա կարող է ապանել այդ հիվանդությունները, որոնք ձեր մարմնի մեջ: Որովհետև այդ մարդը վտանգավոր դրության մեջ էր և օգնության կարիք ուներ: Դուք նույնպես օգնության կարիք ունեք: Եթե օգնություն չստանաք, կմեռնեք:

203 Այժմ պահե՛ք ձեր ձեռքերը միմյանց վրա: Մի՛ աղոթեք ձեզ համար, այլ աղոթեք ձեր կողքին գտնվողի համար:

Դա քրիստոնեական է:

204 Սովորեք սա, սովորեք սա, որ, ինչ ուրիշներին եք անում՝ Քրիստոսին եք անում: Երբ դուք բարիք եք անում մեկ ուրիշին, բարիք եք անում Քրիստոսին: Եթե դուք վատ եք վերաբերվում մեկ ուրիշի հետ, վատ եք վերաբերվում Քրիստոսի հետ: Ո՜հ, Աստված իմ:

205 Ո՜հ, եթե միայն ես կարողանայի հասցնել դա, եթե ես կարողանայի պարզապես թույլ տալ մարդկանց տեսնել դա, այն, ինչին ես նայում եմ, այն, ինչ զգում եմ և այն, ինչ գիտեմ, որ կատարվում է, հասկանում եք: Ինչպե՞ս է Քրիստոսիը այդ Պատգամից հետո այս առավոտ փորձում, որ խորապես թափանցի մարդկանց սրտերի մեջ և մի բան առաջացնի այնտեղ, ոչ թե հուզմունք, ոչ թե էմոցիաներ (դա գալիս է դրա հետ), այլ այնտեղ առաջացնել անմահ մի հավատք, որը չի ասի. մի սանտիմետր զիջի թշնամուն:

206 Եվ այսպես, Նա կլսի իմ աղոթքը, Նա կլսի ձեր աղոթքը: Հիմա դուք աղոթեք միմյանց համար, մինչ ես կաղոթեմ ձեզ բոլորիդ համար:

207 Ո՜վ Տեր, այս մեծ վճռական պահին մենք գիտակցում են, որ շատերի համար սա մահվան և կյանքի միջև տարբերություն է նշանակելու: Ես դողում եմ Քո ներկայությոն մեջ, որովհետև գիտեմ, Տեր Աստված, որ պիտի իմ ողջ սրտով աղոթեմ: Ես գիտակցում եմ, որ անգամ մոտակա հինգ րոպեից հետո մեր մեջ մի հիվանդ մարդ էլ կարող է չմնա, որպեսզի այստեղ եղող ամեն մարդ գիտակցի, որ Դու այստեղ ես: Ահա նրանք այս առավոտ կանգնած են, Տե՛ր: Թող բարձրացնեն իրենց ձեռքերն այն մարդիկ, ովքեր գիտեն, որ ես նրանց չեմ ճանաչում, և ոչինչ չգիտեմ նրանց մասին: Բայց Քո Հոգին ճանաչում է նրանց: Եթե Դու գիտես նրանց սրտի գաղտնիքները, որքան ավելին գիտես նրանց ցավերն ու տառապանքները: Ուրեմն, Տեր, թող դա լինի այսօր, թող դա լինի հիմա, որ Քո Հոգին հպվի իրենց հիվանդ մարմիններին: Ծնորի՛ր դա, Տեր: Նրանք աղոթում են միմյանց համար:

208 Նաև խնդրում են, սիրելի Աստված, որ Սուրբ Հոգին այնքան իրական դարձնի դա նրանց համար, որ նրանք այլևս չկասկածեն դրան: Կա նաև մեկ այլ հիվանդություն, Տե՛ր, որը ավելի վատ է, քան այս ֆիզիկականը, դա հոգևոր հիվանդությունն է: Բաց արա ամեն սիրտը:

209 Տե՛ր, ինչպես կարողացավ պատահել, որ Դու Աբրահամի կողքին կանգնեցիր այնտեղ և կատարեցիր այս նույն բանը, ասացիր Սառային, որ Քո «հետևում էր», Սուրբ Գիրքն ասում է՝ «նա վրանում ծիծաղեց», և Դու նրան ասացիր: Եվ Աբրահամը ճանաչեց, որ դա Էլոհիմն էր՝ հզոր Աստվածը: Մի քանի րոպեից Դու նրա տեսադաշտից անհետացար:

210 Եվ, Տե՛ր, երբ Հիսուսը կանգնեց և նույն բանն արեց և ասաց. «Դուք Աբրահամին եք ձեր «հայրը» անվանում, մինչդեռ ասում եք, որ գիտեք Գրքերը»: Ասաց. *«Դուք սխալվում եք, որովհետև ո՛չ Գրքերը գիտեք, ո՛չ էլ՝ Աստծո զորությունը»:* Եվ նրանք Իրեն «Բեեղզեբուղ» անվանեցին:

211 Բայց Դու խոստացել ես, որ վերջին օրերում նորից Քո Հոգին պիտի թափես: Մարգարեն ասում է. «Երեկոյան ժամին լույս կլինի»: Եվ ահա մենք:

212 Երբ այս ապօրինի աշխարհը ճռռում է մեղքի տակ հարբած մարդու նման, որ օրորվելով երեկոյան գալիս է տուն, շուտով այն կպայթի և նույնիսկ հրաբխային փոշի հազիվ թե նրանից մնա: Եվ մենք տեսնում ենք, որ ժամանակն անցնում է:

213 Ո՛վ Աստված, հեռացրո՛ւ մեզանից ամեն մի կասկած: Մցրո՛ւ մեզ հենց հիմա այդ գործընթացի մեջ: Ե՛կ, Սուրբ Հոգի: Պարզի՛ր Քո հզոր թևերը, տարածվի՛ր հիմա մարդկանց այս փոքրիկ լսարանի վրա, և ողողիր նրանց սրտերի Քեզնով և թող նրանք ճանաչեն Քո աստվածային ներկայությունը որ Դա Դու ես. «Ես եմ Տերը, Ով բժշկում է քո բոլոր հիվանդությունները»: Եվ թող Քո ներկայությունը մի բան առաջացնի նրանց սրտերի մեջ, որը պատճառ կհանդիսանա, որ նրանք հեռանան այստեղից հավատալով իրենց ողջ էությամբ: Եվ թող ամեն հիվանդ ու տկար մարդ բժշկվի:

214 Որովհետև, որպես Քո ծառա, ես կանգնում և դատապարտում եմ ամեն դեվին, դատապարտում եմ հիվանդությունը, դատապարտում եմ Սատանային:

215 Դու պարտված ես, և դու ոչ այլինչ, քան բլեֆ ես: Եվ այս առավոտ ձեռքերդ հետ քաշիր նրանցից Տեր Հիսուս Քրիստոսի Անունով: Եվ որպես Նրա ծառա, ով քարոզում է Իր Խոսքը և մարդկանց ասում է Ճշմարտությունը, որպեսզի ուղղվեն և համապատասխանեն Աստծո Խոսքին, ես դատապարտում եմ քեզ՝ Սատանա, Հիսուս

Քրիստոսի Անունով: Հեռացի՛ր այս մարդկանցից յուրաքանչյուրից, ովքեր հեռվից և մոտիկից եկել են բժշկվելու համար: Դուրս եկ այդ լսարանից և այս մարդկանցից: Ես հրամայում եմ քեզ կենդանի Աստծով: Աստվածաշունչն ասում է. *«Արդարի ջերմեռանդ աղոթքը մեծ զորություն ունի»:* Եվ շատ արդար մարդիկ դրել են իրենց ձեռքերը հիվանդների վրա այստեղ այս առավոտ: Ո՜հ, Սսատանա, դու կուզեիր մղել նրանց մտածելու, թե դա ես եմ, այդժամ դու նրանցից կխլեիր փառքը: Բայց դա նրանց հավատքն է առ Աստված, նրանք հավատում եմ Աստծուն: Եվ իրենց հավատքի շնորհիվ դու ստիպված կլինես հեռանալ: Այսպիսով՝ հեռացի՛ր այստեղից և գնա քո դրսի խավարը, որին պատկանում ես: Ես դատապարտում եմ քեզ Հիսուս Քրիստոսի Անունով, Աստծո Սուրբ Գրքի իշխանությամբ, Հրեշտակի կողմից լիազորագրված: Հեռացի՛ր հիմա Հիսուս Քրիստոսի Անունով, և ազատ թող նրանց: Ամեն:

216 Հավատո՞ւմ եք ձեր ողջ սրտով, որ բժշկված եք: Ուրեմն բարձրացրե՛ք ձեր ձեռքը և ասե՛ք. «Ես ընդունում եմ հիմա Հիսուս Քրիստոսին որպես իմ Բժիշկ: Կասկածի բոլոր հետքերը հեռացան ինձանից: Ես ընդունում եմ Նրան հիմա Նրա զորության լեցունությամբ, Նրա ներկայության օրհնությամբ: Ես ընդունում եմ Նրան»:

Հավատքս Քեզ է նայում,
Ով Գառ Գողգոթայի,
Փրկիչ Աստվածային,
Լսիր աղոթքս հիմա,
Մեղքերս ջնջիր,
Թույլ մի տուր
Քեզանից հեռանամ:

Այժմ եկե՛ք քնքուշ ձևով բարձրացնենք մեր ձեռքերը դեպի Նա:

Երբ կյանքի մութ բավիղը մտնեմ,
Ու ցավերս շատանան,
Դու եղիր Առաջնորդս (Ո՜վ Աստված),
Խավարս լույս դարձրու,
Վախերս հեռացրու,
Թույլ մի տուր
Քեզանից հեռանամ:

…առատ շնորհք…

59-0301M ՆԵՂ Է ԴՈՒՌԸ
Բրանհամի Խորան
Ջեֆերսոնվիլ, Ինդիանա ԱՄՆ

ARMENIAN

©2024 VGR, ALL RIGHTS RESERVED

Voice Of God Recordings
P.O. Box 950, Jeffersonville, Indiana 47131 U.S.A.
www.branham.org

Հեղինակային Իրավունքի Ծանուցում

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքույկը կարող է տպվել տան տպիչի վրա անձնական օգտագործման համար կամ անվճար տրվել՝ որպես գործիք Հիսուս Քրիստոսի Ավետարանը տարածելու համար: Այս գրքույկը չի թույլատրվում վաճառել, պատճենահանել մեծ քանակությամբ, տեղադրել սոց. կայքերում, պահել ԷՀՄ-ում, թարգմանել այլ լեզուներով կամ օգտագործել դրամահավաքի համար առանց Voice Of God Recordings-ի գրավոր թույլտվության:

Հավելյալ տեղեկություն կամ այլ հասանելի նյութեր ձեռք բերելու համար խնդրում ենք կապ հաստատել հետևյալ հասցեով՝

VOICE OF GOD RECORDINGS
P.O. BOX 950, JEFFERSONVILLE, INDIANA 47131 U.S.A.
www.branham.org